26 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1999 ԵՐԵՔՇԱԲԹԻ 1899 (1934)

Azg
Azg armenian daily

Ինպերմոթոր Արմենիա ՓԲԸ
Դայմլերքրայզլերի գլխավոր մանրակարգիչը Հայաստանում
Intermotor Armenia JV CJSC
General Distributor for DaimlerChrysler in Armenia
Արամի 2 փ., Երևան 375010, ՀՀ / 2 Arami str., Yerevan 375010, RA
Հեռ./Tel. (3742) 58-12-75, ֆաքս/Fax: (3742) 56-51-79
Mercedes-Benz
The Future of the Automobile
Ավտոմոբիլի Ապագան

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսօր Ս. Էջմիածնի Մայր տաճարում կբացվի Ազգային-եկեղեցական ժողովը

Մեծ պատասխանատվություն ու զգայնություն է պահանջվում

ՍԵՐԳԵՅ ԳԱԼՈՅԱՆ

Այսօր կարեւորագույն օր է ոչ միայն Հայ առաքելական եկեղեցու սպասավորների, այլեւ ողջ հայ ժողովրդի համար: Առավոտյան ժամը 10-ին Ս. Էջմիածնի Մայր տաճարում բացվում է Ազգային-եկեղեցական ժողովը, որի գլխավոր նպատակն է հայոց 132-րդ հովվապետի ընտրությունը: Մայր աթոռի կաթողիկոսական տեղապահ Եղիսե արք. Պողոսյանի նախագահությամբ մասնակցում Ս. պատարագից եւ աղոթից հետո բացված Ազգային-եկեղեցական ժողովի առաջ ելույթ կունենա հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանը: Այնուհետեւ ժողովը կձեռնարկի իր աշխատանքները: 452 պատգամավորների ու եպիսկոպոսների ներկայության սուգումից հետո ժողովը կընտրի դիվան՝ նախագահ, փոխնախագահ, քարտուղար, ինչպես նաեւ հաշվիչ հանձնախումբ: Հավանաբար այսօր կճշգրտվեն նաեւ մինչեւ առաջիկա հոկտեմբերի 30-ը շարունակվելիք ժողովի օրակարգի հարցերը, եւ դրանով իսկ կավարտվեն առաջին օրվա աշխատանքները:

Ինչ վերաբերում է Ազգային-եկեղեցական ժողովին նախորդած մթնոլորտին, ասենք, որ դժբախտաբար այնքան էլ առողջ եւ հանգիստ չէր: Նախորդ շաբաթներին ու օրերին այնքան խոսակցություններ եղան, կրքեր բորբոքվեցին, որ անգամ ամենաբնական քայլը, օրինակ՝ ժողովականներին իր պատգամը տալու համար ՀՀ նախագահին հրավիրելը, ներկայիս դիտվում է զարմանքով:

Անիրազեկներին տեղեկացնելու համար ասենք, որ անցյալ ուրբաթ օրը Գեորգույն հոգեւոր խորհրդի նիստի ժամանակ որոշվեց դիմել ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանին՝ Ազգային-եկեղեցական ժողովին իր մասնակցությունը բերելու եւ պատգամը հաղորդելու խնդրանքով:

Տես էջ 2

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

Քոչարյան-Ղուկասյան հանդիպում

Ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորմանն առնչվող հարցեր քննարկվեցին նախագահ Ռոբերտ Քոչարյանի եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահ Արկադի Ղուկասյանի՝ երեկ կայացած հանդիպման ընթացքում:

Զրուցակիցներն անդրադարձան խնդրի կարգավորման գործընթացի վերջին իրադարձություններին եւ հնարավոր զարգացումներին, մասնավորապես, մտքեր փոխանակվեցին տարբեր մակարդակներով հայ-ադրբեջանական հանդիպումների շուրջ:

Կարեւորվեց նաեւ ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում բանակցությունների վերսկսման անհրաժեշտությունը եւ այդ գործընթացին ԼՂՀ-ի լիարժեք մասնակցությունը:

ՀՀ նախագահը նոյեմբերի 2-ին կմեկնի Լիբանան

Լիբանանի Հանրապետության նախագահ Էմիլ Լահուդի եւ տիկնոջ հրավերով նոյեմբերի 2-ին պաշտոնական այցով Լիբանան կմեկնի նախագահ Ռոբերտ Քոչարյանը՝ տիկնոջ հետ: Նախագահին կուղեկցի Հայաստանի Հանրապետության պաշտոնական պատվիրակությունը:

Երկօրյա այցի ընթացքում կքննարկվեն եղբայրական երկրների միջեւ երկկողմ հարաբերությունների զարգացման ուղիները, ինչպես նաեւ տարածաշրջանային խնդիրներ:

ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ՄԱՄԼՈՒ ԳՐԱՍԵՆՅԱԿ

Ադրբեջանի ԱԳ նախարարը հրաժարական տվեց

ԲԱԿՈՒ, 25 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ՝ Ադրբեջանի արտաքին գործերի նախարար Թոֆիկ Զուլֆուգարովը հրաժարական է տվել: Այդ մասին այսօր հաղորդել է Բաքվի «Թուրան» լրատվական գործակալությունը: Միաժամանակ հաղորդվում է, որ պետության ղեկավարին հրաժարականի դիմում է տվել նաեւ նախագահի քարտուղարության ղեկավար Էլդար Նամազովը:

Սակայն Բաքվի վերլուծաբանները արտգործնախարարության ղեկավարի, ինչպես նաեւ նախագահի քարտուղարության ղեկավարի հրաժարականը կապում են Լեռնային Ղարաբաղի պատճառով հայ-ադրբեջանական հակամարտության կարգավորման բնագավառում երկրի ղեկավարության քայլերի համար իրենց վրա պատասխանատվություն վերցնել չցանկանալու հետ:

Հատկանշական է, որ հոկտեմբերի սկզբներին հրաժարական էր տվել դարաբաղյան հիմնախնդրի կարգավորման գործընթացի հետ անմիջականորեն կապված մեկ այլ բարձրաստիճան պաշտոնյա՝ արտաքին քաղաքականության հարցերով պետխորհրդական Վաֆա Գուլուզադեն:

Գրոզնին շրջափակված է

ԳՐՈԶՆԻ, 25 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՍՆԱՐՔ՝ Այսօր դաշնային զորքերը շրջափակել են վերջին ճանապարհը, որով Գրոզնուց հեռանում էին փախստականները: Այսպիսով զորքերն ավարտել են Չեչնիայի մայրաքաղաքը շրջապատելու ուղղությամբ տարվող գործողությունները: Չեչնիայի իշխանությունների հավաստմամբ, տարբեր հարվածների արդյունքում միայն շաբաթ եւ կիրակի օրերին զոհվել է 140 բնակիչ եւ ավելի քան 400-ը՝ վիրավորվել: Այդ մասին հայտնում են արեւմտյան ՁԼՄ-ները:

Վանո Սիրադեղյանը կդատապարտվի, եթե... եթե...

Իսկ դատավարությունը հանդիսավոր չի սկսվում

ՍԱՄՍՈՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ՝

Հոկտեմբերի 25-ին պետք է վերսկսվեր Վանո Սիրադեղյանի, Վահան Հարությունյանի եւ այլոց դատավարությունը: Առավոտից վճռաբեկ դատարանի առջեւ հավաքված մարդկանց սակավաթիվ լինելը դատավարությունը վերսկսելու հույս չէր ներշնչում, հատկապես որ բացակայում էր տուժողների հիմնական, ընդ որում ամենաակտիվ մասը: Վերջիններիս բացակայությունը Վանո Սիրադեղյանին թույլ տվեց ինքնավստահ քայլերով մտնել դահլիճ ու անկաշկանդ տեղավորվել իր աթոռին: Օրվա կեսին սկսելով դատական նիստը, դատավոր Ռազմիկ Թովմասյանը, հարցական հայացքն ուղղելով Սիրադեղյանին, տեղեկացրեց, որ նրա դատապաշտպանը չի ներկայացել:

Վանո Սիրադեղյանը հայտնեց, որ իր դատապաշտպանը հիվանդ է եւ գտնվում է շատ օգնության երրորդ հիվանդանոցում: Բնականաբար, նիստը կրկին դատապարտված էր հետաձգման, որովհետեւ, ինչպես պետական մեղադրողներից Զելիմ Թադեւոսյանը հայտնեց իր տեսակետում՝ Սիրադեղյանի եւ մյուս ամբաստանյալների միջեւ շահերի հակասություն կա, ուստի նրա դատապաշտպանի ներկայությունը պարտադիր է: Եվ քանի որ Սիրադեղյանը չցանկացավ փոխել դատապաշտպանին, ստիպված էին սպասել:

Տես էջ 3

Իսրայելի վարչապետը ժամանեց Թուրքիա

ԱՆԿԱՐԱ, 25 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ՝ Թուրքիայի վարչապետ Բյուլենթ Էջեւիթի հրավերով մեկօրյա այցով Անկարա է ժամանում Իսրայելի վարչապետ Եհուդ Բարաքը: Ինչպես հայտարարել է Թուրքիայում Իսրայելի դեսպան Ուրի Բար-Ները, այս այցը պատմական նշանակություն ունի, քանի որ բացի 1958 թ. Իսրայելի այն ժամանակվա վարչապետ Բեն-Գուրիոնի գաղտնի այցից Թուրքիա, Անկարա այդչափ բարձրաստիճան իսրայելական պատվիրակություն անձ չէր այցելել: Այցի ընթացքում, ինչպես տպավորություն է, քննարկվելու են երկու պետությունների տնտեսական եւ քաղաքական համագործակցության հարցերը:

Տպավորություն է, որ Բարաքի այցը եւ իր բանակցությունները էջեւիթի հետ կխթանեն երկու երկրների կապերի հետագա զարգացումը ռազմական եւ տնտեսական բնագավառներում: Ինչպես հաղորդում է Բի Բի Սի-ն, Իսրայելի հետ Թուրքիայի աճող ռազմական համագործակցությունը հարուցել է մեղադրանքներ, թե Թուրքիան դավաճանել է արաբական աշխարհին: Այնուամենայնիվ երկու պետությունները ընդգծում են, որ իրենց կապերը ուղղված չեն երրորդ երկրների դեմ:



ՌԵՔԵԼԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Ընտրություններ, որ առաջին անգամ թվացին զարմանալիորեն «անհետաքրքիր»

ԱՆՈՒՇ ԲԱԲԱՅԱՆ՝

Տեղական ինքնակառավարման մարմինների հոկտեմբերի 24-ին կայացած ընտրություններն ընդհանուր առմամբ ընթացան հանգիստ պայմաններում: Ոչ նախընտրական, ոչ էլ քվեարկության բուն ընթացքում չառաջացնելով ոգեւորության կամ առանձնահատուկ հետաքրքրության բուռն ալիք: Մանր խախտումներ, ընտրացուցակում չընդգրկվելու եւ այդ առիթով դատարան դիմելու դեպքեր, ճիշտ է, եղան, սակայն տարեային բնույթ չեն կրում, ինչպես վերջին պատգամավորական ընտրությունների ժամանակ էր:

Երեկ երեկոյան Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հրապարակեց Երեւանից եւ մարզերից ստացված նախնական արդյունքները, ըստ հոկտեմբերի 25-ի երեկոյան ժամը 18-ի տվյալների դեռեւս բացակայում էին տեղեկությունները Լոռու, Սյունիքի, Արմավիրի մարզերից, ինչպես նաեւ ավագանիների ընտրության արդյունքները, որոնք ավելի երկարաժամկետ ամփոփում են պահանջում: Ըստ նախնական հաշվարկների, Երեւանի համայնքների ընտրություններում «հաղթել» են հետեւյալ 5 թեկնածուները. Ավան համայնքում Հարություն Մարգարյանը, Արաբկիրում Ֆելիքս Յայլոյանը, Էրեբունիում Սիեր Սեղրակյանը, Կենտրոնում Արարատ Զուրաբյանը, Նուբարաշենում Ռուբեն Ասատրյանը:

Մարզերից ստացված տվյալներն առնչվում էին գլխավորապես գյուղամեջերի ընտրություններին, իսկ գյուղամեջերի ընտրությունների տվյալները դեռեւս լիարժեք չէին եւ շարունակում են ճշգրտվել: Հայտնի են Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր, Ջերմուկ եւ Վայք քաղաքներում ընտրված թեկնածուների անունները՝ Սիրեկան Բաբայան, Ս. Սրսենյան ու Ջարո Ավետիսյան

Տես էջ 2

digitised by A.R.A.R.@

ՈՒՇԱԳԻՐ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսօր Ս. Էջմիածնի Մայր տաճարում կբացվի...

Սկիզբը էջ 1

Սա անյսի զարմանալի է թվում, եթե հաշվի առնենք, որ Հոգեւոր խորհրդի ուրբաթ օրվա նիստին նախագահում էր կաթողիկոսական տեղապահ Ներսես արք. Պոզապալյանը, իսկ ատենադպիրներն էին Երուսաղեմի պատրիարք Թորգոմ արք. Մանուկյանը եւ Պոլսո պատրիարք Մեսրոպ արք. Մուրադիանը, որոնք սեպտեմբերի 28-ին Տիրան արք. Կյուրեղյանի, Պարգեւ արք. Սարգիսյանի եւ Խաչիկ արք. Պարսամյանի հետ ստորագրել եւ մամուլով ու Ինտերնետ ցանցով տարածել էին մի հայտարարություն, որում մասնավորապես ասված էր. «...Վերջին օրերի զարգացումները հստակորեն ցույց են տալիս, որ պետական ավագանին կարիք է կայացրել եւ դիրքորոշվել է ի նպաստ բեկնածուներից մեկի եւ աջակցանք է կատարում նրա կաթողիկոսացման համար»: Ինչպես այս հայտարարությունը, այնպես էլ հետագայում բացված փակագծերը հուշում են, որ խոսքն Արարատյան թեմի առաջնորդ Գարեգին արք. Ներսիսյանի մասին է: Բայց ինչո՞ւ հնարվեց սա, ի՞նչ նպատակ էր հետապնդում այդ հայտարարությունը եւ ինչո՞ւ արդա, մի քանի շաբաթ հետո, Ազգային-եկեղեցական ժողովին մասնակցելու եւ պատգամ հաղորդելու հրավեր է ուղարկվում ՀՅ նախագահին: Ռոբերտ Քոչարյանն իր պատգամն արդեն հաղորդել էր ինչպես եպիսկոպոսաց դասի ներկայացուցիչների, այնպես էլ չորս ժուռնալիստների հետ հայտնի հանդիպման ժամանակ:

Եվս մեկ զարմանալի իրավիճակ: Ամենատարբեր բերքերում եւ զանգվածային լրատվության այլ միջոցներով բացահայտ հերյուրանքներ ուղղվեցին Գարեգին արք. Ներսիսյանի հասցեին: Եթե այս պատկվիչների հեղինակները տակ ժուռնալիստներ կամ աշխարհիկ այլ մարդիկ լինեին, արդա ինչ-որ տեղ կարելի էր արհամարհել այդ ելույթները կամ անուշադրության մատնել: Սակայն, ցավոք սրտի, դրանց հեղինակների մի մասը հենց եկեղեցու սպասավորներ էին, ի տարբերություն որոնց Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդը միշտ պահպանեց իր արժանապատիվ կեցվածքը. Հայ եկեղեցու հեղինակությունը բարձր պահելու նախանձախնդրությունը: Նմանապես՝ նրա կողմնակիցները, որոնց ելույթները զուտ էին, վարկաբեկման երանգներից զերծ:

Անկեղծ ասած, «կոմպրոմատների» այս գործընթացը պատիվ չի բերում մեր առաքելական եկեղեցու որեւէ սպասավորի:

Այն կարծիքն է սկսվում ձեւավորվել, որ ինչ-որ ուժեր ցանկանում են ամեն կերպ խաչատակել մեր ընտրությունը, բիծ թողնել մեր 132-րդ հովվապետի եւ եկեղեցու վրա ընդհանրապես: Երկրորդ, ոմանք այն տպավորությունն ունեն, որ հենց այս Ազգային-եկեղեցական ժողովում մի խումբ եպիսկոպոսներ, երուսաղեմի հայոց պատրիարք Թորգոմ արք. Մանուկյանի գլխավորությամբ, փորձելու են կանոնական կարգավիճակ տալ եպիսկոպոսաց ժողովին, ինչը հաճարգոր է, մեր կարծիքով, Հայ եկեղեցու ներսում կղերապետություն ստեղծելուն, եկեղեցու ժողովրդավարացման առջեւ ճանապարհը փակելուն, մինչդեռ մեր եկեղեցին, մանավանդ այսօր, պետք ունի հավատացյալ ժողովրդի առաջ բացվելու, միասնաբար լուծելու համար նույն ժողովրդի առջեւ ծառացած ծանրածանր խնդիրները:

Վերադառնալով իշխանության միջամտության մասին պնդումներին, հարկ է նշել, որ երեկ «Նոյյան տապան» գործակալությունը մի հաղորդագրություն տարածեց, որում Հայ առաքելական եկեղեցու Ամերիկայի Արեւմտյան թեմի առաջնորդ, Ամենայն հայոց 132-րդ կաթողիկոսի ընտրությունները նախապատրաստող հանձնախմբի ղեկավար Վայե արք. Հովսեփյանը հայտարարում է, որ կաթողիկոսի ընտրությունների հարցում իշխանությունների կողմից որեւէ ճնշում չի գործադրվել: «Դուրսը բավական անտեղի խոսակցություններ եղան, եւ շատ ցավում եմ, որ մեր հոգեւորականներից ոմանց համար նկարագրի տպանություն եղավ», նշում է Վայե սրբազանը:

Ամեն դեպքում, հուսով ենք, որ այսօր մեր հոգեւոր բարձրագույն դասի ներկայացուցիչները, ընդհանրապես Ազգային-եկեղեցական ժողովի բոլոր 452 պատգամավորները սթափ, առանց ավելորդ հույզերի կաշխատեն արդյունավետ, եւ մենք կունենանք մեր մեծագույն հովվապետներին արժանի փոխարինող:

Աստված մեզ օգնական:

Ընտրություններ, որ առաջին անգամ թվային զարմանալիորեն «անհետաքրքիր»

Սկիզբը էջ 1

Արարատի մարզից հայտնի են Արարատի, Մասիսի եւ Վեդիի նորընտիր քաղաքապետների անունները՝ Գագիկ Գասպարյան, Սաշա Հակոբյան եւ Վարուժան Բարսեղյան: Կոտայքի մարզից հաղորդել են, որ Աբովյան քաղաքում ընտրվել է Դրաստամատ Ավագյանը, Բյուրեղավանում՝ Արարատ Խանզադյանը, Եղվարդում՝ Նորայր Սարգսյանը, Ծաղկաձորում՝ Գարուն Միրզոյանը եւ Նոր Հաճնում՝ Արմեն Քեչիշյանը: Տավուշի մարզում ընտրվել են Հրաչիկ Մելիքյանը՝ Բերդում, Ժորա Պետրոսյանը՝ Դիլիջանում, Սերյոժա Ամիրաղյանը՝ Նոյեմբերյանում:

Ըստ ԿԸՀ-ի տեղեկության՝ հոկտեմբերի 24-ի ընտրություններին աննախադեպ ակտիվ մասնակցություն է հանդես բերել Գեղարքունիքի մարզի բնակչությունը. քվեարկել է ընտրական իրավունք ունեցողների 57-58 տոկոսը: Գավառում քաղաքապետի «տիտղոսը» պահպանել է Ֆելիքս Ղարաբաղցյանը, Ճամբարակում ընտրվել է Հայկ Լազարյանը, Սեւանում՝ Աշոտ Ալեքսանյանը, Վարդենիսում՝ Վոլոդյա Խլոյանը:

Արագածոտնի մարզում արդյունքները հետեւյալն են. Աշտարակում հաղթել է Աշոտ Ղարաֆյանը, Ապարանում՝ Ռազմիկ Պետրոսյանը, Թալինում՝ Գուրգեն Գրիգորյանը:

Վերջում ներկայացնենք արդեն երեկ հայտնի դարձած տվյալները Շիրակի մարզից: Գյումրիի քաղաքապետի պաշտոնում հաստատվել է Վարդան Ղուկասյանը, Արթիկում, Մարալիկում եւ Ախուրյանում համապատասխանաբար ընտրվել են Հմայակ Աբրահամյանը, Թովմաս Սահակյանն ու Արծրունի Իգիթյանը, Ամասիայում եւ Աշոցքում՝ Աղասի Ամիրյանն ու Արարատ Հովհաննիսյանը:

ԿԸՀ-ն, խոստման համաձայն, քվեարկության արդյունքների վերջնական ու լիարժեք ամփոփմամբ հանդես կգա արդեն այսօր: Ինչ վերաբերում է Երեւանի մարզային հանձնաժողովին, ապա երեկ մինչ ուշ երեկո այնտեղ դեռեւս պատասխան չէին տվյալ կամ տեղեկություն ներկայացնել՝ մեր հեռախոսազանգերին պատասխանելով խուսափողական ու անհասկանալի մերժմամբ:

Պատասխան խմբագրություն «Ազգ» օրաթերթի

Երեքշաբթի, 19 հոկտեմբեր 1999 թուակիր **«Ազգ»** օրաթերթի առաջին էջի վրայ հեռաձրությամբ նշանակեցիք «Ոյքը» գործակալության հաղորդումներուն յենլով կատարուած ձեր հաղորդումը, թէ Թուրքիոյ կառավարութիւնը Թուրքիոյ հայոց պատրիարքին միջոցաւ կը միջամտէ Ամենայն հայոց կաթողիկոսի ընտրութեան:

Այս լրատուութեան բովանդակութեան կապակցութեամբ կ'ուզենք ձեր նկատառման յանձնել, որ Թուրքիոյ Հանրապետութիւնը ապահովաբար (լաիք) պետութիւն մնն է եւ այս սկզբունքը որդեգրած է իր սահմանադրութեան մէջ: Ուստի, իրաւաբանս չի կրնար ըլլալ այդ լուրը, որովհետեւ սա կարելի է վերագրել այնպէս, թէ պետութիւնը հակասութեան մէջ կ'իյնայ սահմանադրութեան անփոփոխ սկզբունքին հետ:

Յարգանքով

ՏԻԳՐԱՆ ԱԼԵՔՈՒԼ
Թուրք-հայ գործարարութեան զարգացման կոմիտէի փոխնախագահ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՊԵՐ

Երեւանում բացվեց հայ-լիբանանյան երկրորդ գործարար համաժողովը

ԵՐԵՎԱՆ, 25 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Երկու երկրների կառավարությունները ամեն ինչ կանեն գործարարների համագործակցության առավել բարենպաստ պայմաններ ապահովելու համար: Հոկտեմբերի 25-ին Երեւանում բացված հայ-լիբանանյան երկրորդ գործարար համաժողովի բացմանը այս մասին հայտարարեց ՀՀ վարչապետ Վազգեն Սարգսյանը: Նրա խոսքերով, Լիբանանը հայ գործարարության համար կարող է ելք ապահովել դեպի արաբական երկրներ, իսկ Հայաստանը լիբանանցի գործարարներին ԱՊՀ երկրներ: Նշելով, որ Հայաստանում ձեւավորված դասական համակարգը պատրաստ է առավելագույնս պաշտպանելու մասնավոր սեփականության իրավունքները վարչապետը ասաց. «Մենք պատրաստ ենք Աժ ներկայացնել մեր հողային օրենսգիրքը մասնավոր սեփականության իրավունքը տարածելու համար նաեւ քաղաքաշինական հողերի վրա»: Դա, ինչպես նաեւ առաջիկայում ԱՀԿ-ը Հայաստանի անդամակցությունը, լրացուցիչ խթան կհանդիսանան բիզնեսի զարգացման համար:

Լիբանանի արդյունաբերողների ասոցիացիայի նախագահ Ժակ Սառաֆը նշեց, որ իրենք պատրաստ են առեւտրի, արտադրության եւ բանկային համակարգի ոլորտներում համատեղ ձեռնարկություններ ստեղծել: Նա գտնում է, որ համագործակցության զարգացման համար կարիանջվեն մաքսային եւ հարկային տոկոսադրույքների նվազեցում, արտահանման եւ ներմուծման օրենքների պարզեցում: Հարկ կլինի ստեղծել նաեւ հայ-լիբանանյան գործարարության զարգացման հիմնադրամ:

Կարեւորելով հայ-լիբանանյան գործարար կապերի զարգացման գործում ունեցած մեծ ավանդը Հայաստանի արդյունաբերողների եւ գործարարների միության նախագահ Արամ Վարդանյանը նաստեր Սահիդին, ժակ Սառաֆին եւ Լիբանանի հայ գործարարների խորհրդի նախագահ Նազարեթ Սարգսյանին հանձնեց ՀԱԳՄ դիպլոմներ եւ ոսկե մեդալներ:

Համաժողովին մասնակցող 50-ից ավելի լիբանանցի գործարարները ներկայացնում են Լիբանանի բեթեր եւ սննդի արդյունաբերության ճանաչված ֆիրմաները: Համաժողովի շրջանակներում բացվեց նաեւ լիբանանյան ապրանքատեսակների ցուցահանդես:

Ազատված ադրբեջանցի ռազմագերիները Երեւանից մեկնեցին Բաքու

ԵՐԵՎԱՆ, 25 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Երկու ադրբեջանցի ռազմագերիներ՝ 23-ամյա Աֆղան Սաֆարալիեւը եւ 21-ամյա Սիսրադին Սուլիդովը, հոկտեմբերի 25-ին ազատ արձակվեցին եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունից ուղարկվեցին Երեւան, որտեղից նույն օրը մեկնեցին Բաքու:

Ռազմագերիներն ազատվել են ԼՂՀ նախագահի որոշմամբ՝ ի նշան բարի կամքի եւ որպես փոխադարձ վստահության ամրապնդմանն ուղղված միջոցառումների միակողմանի իրականացում: Ինչպես «Զվարթնոց» օդանավակայանում լրագրողների հետ զրույցում նշեց ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Անջեյ Կասպրշիկը, այդ որոշումը ԵԱՀԿ գործող նախագահ, Նորվեգիայի արտաքին գործերի նախարար Կնուտ Վոլեբեկի տարածաշրջան կատարած ուղեւորության արդյունքն է, որը «բոլորին դիմել էր ռազմագերիներին ազատելու խնդրանքով»: Ռազմագերիների հանձնման տեխնիկական պայմանները համաձայնեցվել են Անջեյ Կասպրշիկի ԼՂՀ այցի ժամանակ, Միջազգային Կարմիր խաչի անմիջական մասնակցությամբ: Ռազմագերիների ազատ արձակմանն աջակցություն է ցուցաբերել նաեւ «Ընդդեմ իրավական բռնության հիմնադրամ» հայկական ոչ կառավարական կազմակերպությունը:

Ռազմագերիներին ընտրելիս Կասպրշիկի կողմից խնդրանք էր հայտնվել հաշվի առնել գերության մեջ գտնվելու ժամանակը: գերիներից մեկի Ս. Սուլիդովի խոսքերով, ինքը գերի է ընկել Ֆիզուլիում երեք տարի առաջ:

Այն հարցին, արդյոք նորմա՞լ են եղել իրենց գերության մեջ պահելու պայմանները եւ կա՞ն արդյոք բողոքներ, երկու ռազմագերիները պատասխանեցին. «Այո, նորմալ»: Նրանց խոսքերը հաստատեց նաեւ Ս. Կասպրշիկը, որը նշեց, որ թեեւ գերիներին չի հարցրել, թե արդյոք նրանք բողոքներ ունե՞ն, սակայն, ինչպես հասկացել է, պահելու պայմանները նորմալ են եղել:

Պրն. Կասպրշիկը հույս հայտնեց, որ մոտ ժամանակներս կհաջողվի ազատել ԼՂՀ-ում եւ Հայաստանում գտնվող բոլոր ռազմագերիներին, որոնց թիվը, պաշտոնական տվյալներով, ներկայումս 9 է 3-ը ԼՂՀ-ում եւ 6-ը Հայաստանում: ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչը նաեւ հայտարարեց, որ հայ ռազմագերիներ Ադրբեջանում չկան, վկայակոչելով Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիեւի այն հայտարարությունը, թե բոլոր հայ ռազմագերիներն Ադրբեջանից ազատվել են: Կասպրշիկի խոսքերով, ինքը նաեւ չի լսել, որ Ադրբեջանում կան պատանդ վերցված խաղաղ բնակիչներ: Սակայն, սակայն, անհայտ կորածների որոնման խնդիրը, որով արդեն սկսել է զբաղվել համատեղ խումբ,- նշեց նա:

Սամվել Դարբինյանը՝ Վանաձորի քաղաքապետ

Լոռու մարզային ընտրական հանձնաժողովից մեզ հաղորդեցին, որ մարզում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններն անցել են առանց էական խախտումների: Մարզի բոլոր 97 համայնքներում ընտրությունները կայացել են: Երեք երեկոյան մարզկենտրոնի ընտրական 49 տեղամասերից ամփոփված էին միայն 34-ի տվյալները: Ըստ նախնական տվյալների, շուրջ 2000 ձայնի առավելությամբ Վանաձորի քաղաքապետ է ընտրվել «Լոռու ՃՇՇ» ՊՓԲԸ-ի տնօրեն Սամվել Դարբինյանը: Ձայների քանակով 2-րդ հորիզոնականում է Վանաձորի տարածքային հարկային տեսչության պետ Արմեն Սարուխանյանը: Իսկ նախկին քաղաքապետ Անդրանիկ Հարությունյանի արդյունքը 4-րդն է: Երեկ ուշ երեկոյան մարզային ընտրական հանձնաժողովից չկարողացան մեզ տրամադրել գոնե մարզի մյուս հինգ քաղաքներից ընտրված համայնքապետերի անունները (Ալավերդում եւ Սպիտակում քաղաքապետի ընտրություն չի կայացել): Ընտրությունների արդյունքների ամփոփումը շարունակվում է: Մի բան պարզ է, որ Վանաձորի քաղաքապետն արդեն ընտրված է, քանզի ձայների տարբերությունը զգալի է:

ՄԱՆՎԵԼ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
Վանաձոր

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության Ը տարի
Գլխավոր եւ հիմնադիր «Ազգ» թերթի խմբագիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Թեմ 529353, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՎԵՏԻՔԵԱՆ / Տնտ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / Տնտ. 529221
Տնօրեն
ԳՐԱՅՐ ՁՕՐԵԱՆ / Տնտ. 562863
Հանձնարարական ծառայություն / 562941
Apple Macintosh
հանձնարարական ծառայություն «Ազգ» թերթի
Յղումը «Ազգին» պարտադիր է
Նյութերը չեն գրախօսում ու չեն վերադարձնում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՈՒՇԱԳԻԿ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Կադրային փոփոխություններին սպասելիս

ԱԺ-ն իր արյունով հասստեց Վերահսկիչ պալատի հաշվետվությունը

Տայասանյան իշխանությունների ամիլեսյան գարշադարը կադրային հարցն է: Սալիինի կարգախոսը՝ կադրերն են որոշում ամեն ինչ, բնավ ժամանակավրեպ չէ, կադրերն են որոշում եւ կոռուպցիայի ծավալները, եւ դրա դեմ պայքարի արդյունավետությունը: ԱԺ-ն կադրային դաշտում փորձում է հասստել իր համակրանքները, ու թեեւ կառավարության հասարակայնության հետ կադրերի վարչությունից ի լուր ամենի ազդարարում են, որ վարչապետ Վազգեն Սարգսյանը չի պատրաստվում կադրային փոփոխություններ կատարել, միեւնույն է, ԱԺ-ն հերթական եռոտյայում վերահաստատեց իր կամքը՝ վերածելով կադրային քարտեզը: Պահն առավել քաղաքային էր. խորհրդարանում քվեարկության դրվեց Վերահսկիչ պալատի 98 թ. տարեկան հաշվետվությունը, որն ուշադիր ընթերցողի համար հարուստ է կարեւորագույն զեկուցումով՝ բարձրաստիճան պաշտոնյաների աղտոտիների գործունեության հետ ուղղակի առնչվող դրվագներ: Ասոս Թավադյանի ղեկավարած պալատը 98 թ. տարեգրության մեջ հաստատել է այն ճշմարտությունը, որ Հայաստանում բյուջեից գողանալը քրոնիկական բնույթ է կրում, քրոնիկական է նաեւ վարկային միջոցներից եւ օտարերկրյա փոխառություններից յուրացումներ կատարելը: Վերահսկիչ պալատին քաղաքական շատ ուժեր, ըստ տրամաբանության, պիտի որ շնորհակալ լինեին, սակայն հաշվետվության քննարկումն առաջացրեց հակառակը: «Միասնություն» խմբակցության ՀԺԿ թեւը կազմակերպված գրոհ սկսեց Ասոս Թավադյանի դեմ, որն արժանացավ բազմաթիվ մեղադրանքների, ամենաինքնաշիտը տրամադրության պակասի ամբաստանությունն էր: Նախագահ Ռոբերտ Քոչարյանի թեթեւ ձեռքով շրջանառության մեջ դրված տրամադրության գործոնը դարձյալ օրակարգում է: ՀԺԿ շատ պատգամավորներ Գագիկ Ոսկանյանը, Վանյա Հովհաննիսյանը, Գուրգեն Եդիազարյանը... Վերահսկիչ պալատի հաշվետվությունը համարեցին անարդյունավետ, զավեշտական, քանզի այնտեղ նշված չէին մեղավորներին, բյուջետային եւ տնտեսական հարցերի հանձնաժողովի նախագահ Վարդան Խաչատրյանը. «Պետք չէ գրել լափեցին, թալանեցին հասկանալու համար, որ յուրացումներ են եղել»: Համաձայնենք, որ լափել եւ թալանել բառերի ակտիվ գործածությունը դեռեւս տրամադրության չափանիշ չէ:

«Իրավունք եւ միաբանություն», «Օրինաց երկիր» խմբակցությունները, «Կայունություն» պատգամավորական խումբը պատասխան կանգնեցին Ասոս Թավադյանին, իսկ Հայկ Բաբուխանյանը («Իրավունք եւ միաբանություն») փիլիսոփայորեն ընդհանրացրեց բանավեճը. «Մենք կարծես ափոթել ենք, թե ով է Թավադյանը, նրան շատ լավ հարցեր են ուղղվում, բայց հաստատերը ճիշտ չէ: Թավադյանը ոչ վարչապետ է, ոչ էլ երկրի նախագահ»:

ՀԺԿ պատգամավորների մերժողական դիրքորոշումը բացատրելի է. ՎՊ-ն լուրջ զենք է կառավարությանը վերահսկողության տակ պահելու համար, այսինքն՝ անհրաժեշտության դեպքում ցանկացած նախարարի պատասխանատվությանը նոստելու: Ուստի ՀԺԿ-ն կամենում է այս գործիքը չի. ինչը յուրաքանչյուր նվազագույնն է խորհրդարանական տարբեր ուժերի այրերում: Տիգրան Թորոսյանը «Միասնության» անունից (իրականում Հանրապետական կուսակցության) ՎՊ-ի հաշվետվությունն առաջարկեց հաստատել. «Եկեք չխառնենք խնդիրները, իր լիազորությունների եւ ունեցած կարողությունների սահմաններում ՎՊ-ն կատարել է իր դերը»:

Հայաստանում կանխորոշված է՝ ո՞վ է հաղթելու եւ ինչպե՞ս

«Օրինաց երկիր» խմբակցության ղեկավար Արթուր Բաղդասարյանն այս պնդումը վկայակոչեց տնտեսական ոլորտի համար, սակայն քաղաքական ասպարեզում եւս կանխորոշման գործոնը կատարում է իր դերը: Բայց դրա դեմ պայքարում են ԱԺ փոքրամասնությունները: Ամենանախանձախնդիրը կրկին «Իրավունք եւ միաբանությունն» էր: Արտաքս Գեղամյանը յուրովի պատասխանեց Ասոս Թավադյանին. «Փոխանակ մեղավորներին գտնեք, եկել կոչել եք այս մարդուց ջանից»: Նա առաջարկեց վռնդել կառավարությունից մեղավորներին եւ վերականգնել ԱԺ վերահսկիչ գործառույթը: Հայկոմկուսը եւս ջատագովն էր ԱԺ վերահսկողական գործառույթի բարձրացման: Իրականանում է այն կանխատեսումը, թե յուրաքանչյուր հայ երազում է վերահսկել իր շրջապատը: Խորհրդարանում օրենսդիր աշխատանք ծավալելու գաղափարով ոգեւորված պատգամավորները շատ չեն, բայց վերահսկող դառնալու ձգտում ունեցողները՝ բազում: Մասամբ մեղմելու համար ներկա եւ ապագա վերահսկողներին Վարդան Խաչատրյանն ընդգծեց. «ԱԺ վերահսկողությունն ամբողջ աշխարհի վերահսկողությունը չէ, մեր վերահսկողությունը տարածվում է միայն գործադիր իշխանության վրա»:

ԱԺ խոսնակ Կարեն Դեմիրճյանը խոստացավ հաշվետվությունն ուղարկել ՀՀ դատախազություն եւ կառավարություն՝ ակնկալելով իրական մեղավորների բացահայտում եւ պատիժ: Բացի Թավադյանից, ԱԺ-ն հույս ունի նաեւ Կենտրոնական բանկի նախագահ Տիգրան Սարգսյանի պատասխանատվությանը հասնել: Հակառակ պարագայում անբացատրելի են ԿԲ-ի դեմ պարբերական հարձակումները, թե ԱԺ ամբիոնից, թե մամուլից: ԿԲ-ն խախտել է բյուջեի մասին օրենքը, սխալ է որոշել վերաֆինանսավորման տոկոսադրույքը, տարալել է դրամավարկային քաղաքականությունը: Կարծում ենք, այս խնդիրն ԱԺ ուժերից վեր է: Վայե Սպանդարյանի գալուստը, Հայներարտբանկում ազդեցիկ նոր ներդրում (2 մլն դոլար) կատարելու քայլը, ինչպես նաեւ HSBC նոր մասնաճյուղի բացումը վկայում են, որ մեր բանկային, համակարգի եւ ղեկավարի ոսքերը կավից չեն:

1 դեմ, 4 ձեռնպահ եւ 79 կողմ ձայներով ՎՊ-ի հաշվետվությունը հայաստանյան բարձրաստիճան պաշտոնյաների կողմից գործած աղտոտիությունների մասին հասատվեց եւ տուսով կուղարկվի կառավարություն, որտեղ այսօր էլ դժվար չէ գտնել հասցեատերերին այն պաշտոնյաներին, որոնց համար օրենքը խախտելն արդեն ավանդույթ է: Վերջին խոսքը դատախազությանն է:

ՆԱՐԻՆԵ ԴԻԼԲԱՐՅԱՆ

ՍԴ-ը՝ Սահմանադրության տառի նախանձախնդիր պահապան

Սահմանադրական դատարանը երեկ քննարկելու էր 5 միջազգային համաձայնագրերում (կամ նախապես ստորագրված համաձայնագրերում փոփոխություններ կատարելու վերաբերյալ արձանագրություններում) ամրագրված պարտավորությունների սահմանադրականության խնդիրը, որոնցից երկուսի նկատմամբ լուրջ կասկածներ ուներ: Խոսքը Հայաստանի եւ Միջազգային զարգացման ընկերակցության (ՍԶԸ) միջեւ ստորագրված ճաղոնական դրամաշնորհի (280 հազար ԱՄՆ դոլար) եւ հունական դրամաշնորհի (500 հազար դոլար) վերաբերյալ համաձայնագրերի մասին է (երկուսն էլ՝ կառուցվածքային բարեփոխումների երրորդ վարկային ծրագրի նախապատրաստման շրջանակում):

ՍԴ-ը ժամավաճառություն (գուցե նաեւ տեղեկություններ) ունենալով, թե ի խախտումն Սահմանադրության 6-րդ հոդվածի, այդ համաձայնագրերով նախատեսված ծրագրերը «հումքում» (ՍԴ-ում չքննարկված եւ ԱԺ-ում չվավերացված) արդեն իսկ գործադրվել են, այսինքն՝ ֆինանսական միջոցներն ամբողջությամբ կամ մասնակի օգտագործվել են, համապատասխան գրություններ էր հղել ֆինանսների նախարարություն՝ հավելյալ փաստաթղթեր եւ տեղեկանքներ պահանջելով: Դիմող կողմը՝ ՀՀ նախագահը, որին պաշտոնապես ներկայացնելու էր նախ՝ ֆինանսների նախարար Լեւոն Բարխուդարյանը, ապա՝ նախարարի առաջին տեղակալը եւ տեղակալը. ՍԴ «հեռաբրեպատությանն» ի պատասխան, օգտագործելով ՍԴ-ի մասին օրենքի 33-րդ հոդվածում սահմանված իրավունքը, ետ էր վերցրել այդ փաստաթղթերը:

Սակայն հարցն, ինչպես նիստից հետո պարզաբանեց ՍԴ նախագահ Գագիկ Հարությունյանը, սպառված չէ. եթե դրանք միջազգային համաձայնագրեր էին եւ համապատասխան դրամաշնորհներն իսկապես օգտագործվել են առանց վավերացման, ապա Սահմանադրությունը խախտվել է, եթե միջազգային պայմանագրեր չէին՝ եւ գործադրվել են, ապա դարձյալ առկախ է մնում դրանց ֆինանսական վերահսկողության խնդիրը, եւ ԱԺ-ը, որն ,հարությունյանի կարծիքով, պետք է անդրադառնա այդ հարցերի պարզաբանմանը: Սա այդօրինակ առաջին նախադեպը չէ, եւ ՍԴ-ն մշտապես է հետաքրքրվել ՍԴ-ի եւ ԱԺ-ի «դոբրոյի» շրջանցմամբ գործադրված ծրագրերը հետին թվով քննարկելու պրակտիկայից՝ դրանք, ըստ ամենայնի, մամուլի, ասել է թե՝ հասարակայնության ուշադրության առարկա դարձնելով:

Այս անգամ հարցերը քննարկվեցին եւ դրական լուծում ստացան, այսինքն՝ Սահմանադրությանը համահունչ ճանաչվեցին: Առաջինը՝ ջրային սեկտորի զարգացման ճաղոնական դրամաշնորհի համաձայնագիրը, որը ստորագրվել է 1999 թ. հունիսի 16-ին երեւանում, ուղղված է ոռոգման սեկտորի զարգացման ծրագրի նախապատրաստմանն աջակցելուն, ջրովի հողերի շահութաբերության բարձրացմանը, ոռոգման, դրենաժային, ջրամբարային համակարգերի արդյունավետության խթանմանը (խնդիրը ներկայացրեց գյուղնախարար Գագիկ Շահբազյանը): Երկրորդը եկամուտների եւ գույքահարկի առնչությամբ կրկնակի հարկումը բացառելու եւ հարկումից խուսափելը կանխելու վերաբերյալ Հայաստանի եւ Հունաստանի միջեւ 1999 թ. մայիսին Մոսկվայում ստորագրված համաձայնագիրն էր, որի վերաբերյալ պարզաբանումներ տվեց ՀՀ եկամուտների նախարար Սմբատ Այվազյանը: ՍԴ-ին հետաքրքրեց, թե միջազգային այդ կարգի փաստաթղթերը որքանո՞վ հաստատ են նախարարության, հարկային եւ մաքսային մարմինների աշխատակիցներին եւ որքանո՞վ են կիրառվում գործնական որոշումներ ընդունելիս: Նախարարությունը 4 ամիս առաջ է ծեւավորվել, եւ միջազգային փաստաթղթերի «տեղայնացումը» դեռեւս ընթացքի մեջ է, պատասխանեց պրն Այվազյանը, եւ քննարկումն ավարտվեց:

Երրորդ խնդիրը՝ 1994 թ. ապրիլի 15-ի «Ազատ առեւտրի գոտու ստեղծման մասին» համաձայնագրում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու վերաբերյալ 1999 թ. ապրիլին Մոսկվայում ստորագրված արձանագրության սահմանադրականության շուրջ բացատրություններ տվեց ՀՀ արդյունաբերության նախարար Հայկ Գեւորգյանը: ՍԴ-ն այս հարցում էլ կասկած ուներ. ինչո՞ւ վավերացված չէ 1998 թ. ՍԴ հավանությանն արժանացած 1994 թ. համաձայնագիրը, եւ ի՞նչ անհրաժեշտություն կա այսօր քննարկել եւ վավերացնել փոփոխությունները: Պրն Գեւորգյանը չգիտեր, թե ինչո՞ւ էր ուշացել համաձայնագրի վավերացումը մինչեւ 1998 թ., սակայն հայտնեց, որ ՍԴ-ի հավանությանն արժանանալուց անմիջապես հետո դրվել էր փոփոխությունների խնդիրը, եւ նպատակահարմար էր դիտվել երկու փաստաթղթերը միաժամանակ ներկայացնել Ազգ վավերացմանը: Այս բացատրությունը կարծես բավարարեց ՍԴ անդամներին, եւ խորհրդակցելով նրանք երեք փաստաթղթերում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանն արձանագրող որոշումներ հրապարակեցին:

ԼԻԼԻԹ ՊՈՂՈՍՅԱՆ

ԴԱՏԱՐԱՆ

Վանո Սիրադեղյանը...

Սկիզբը էջ 1

Մեր նախորդ հրապարակումներում նշել էինք, որ յուրաքանչյուր հետաքրքրություն նոր ալիք է բարձրացնում տուժողների եւ ամբաստանյալների շարքում, որը կրկնվեց նաեւ երեկվա կարճատեւ նիստում: Վահան Հարությունյանի դատապաշտպանը դժգոհեց դատավորից, որը նախորդ նիստում քննարկման չդրեց նման իրավիճակները կանխելու նպատակով արված իր միջնորդությունը եւ առաջարկեց սուզել՝ եթե դատապաշտպանը հիվանդ է, ազատել նիստերին մասնակցելու պարտականությունից: Փաստաբան Բալաբանյանը Սիրադեղյանի մասին խոսելիս «պարոնով» դիմեց, որը մյուս ամբաստանյալներին հունից հանեց: Նրանք շտապեցին ճշտում կատարել՝ «ամբաստանյալ Սիրադեղյան», իսկ ամբաստանյալ Մուրադ Դաշտոյանը, որին առավել զայրացնում էր Սիրադեղյանի արտոնյալ վիճակը, վրդովված նեցեց, թե դեռ թերթերում էլ հարցազրույցներ է տալիս եւ պահանջեց, որ ՀՀՇ վարչության նախագահը հարցազրույցներում այլեւս չխոսի իրենց անունից՝ «Մենք 15 տարի ենք ուզում նստել»: Նա ավելացրեց, որ առողջական վիճակը վատ է եւ ցանկություն չունի հնազանդվելու Սիրադեղյանի դատավարությունը ձգձգելու պահանջներին: Տուժողներից Մայիս Ռաֆայելյանն ու Կիմ Բալայանը հավելեցին, որ ձգձգումները մտածված քայլեր են՝ «Մեզ են ձեռ առնո՞ւմ, թե՞ իրենց» եւ միջնորդեցին, որպեսզի Սիրադեղյանը տեղ գրաղեցնի մյուս ամբաստանյալների կողքին, հավասար պայմաններում:

Դատավորը միջին տարբերակ ընտրեց՝ կարճ ժամկետով ընդմիջել նիստը եւ հարցում կատարել հիվանդանոց՝ իրավիճակը պարզելու համար: «Կարճատեւ» ընդմիջումը տեւեց մինչեւ երեկո, վերադառնալով դատավորն ընթերցեց հիվանդանոցից ստացված հարցման պատասխանը, ըստ որի, Վ. Սիրադեղյանի դատապաշտպան Սերյոժա Շահվերդյանը երեկ կեսօրին սրտի նոպայով տեղափոխվել է հիվանդանոց, սակայն նրա առողջական վիճակը բավարար է եւ երկու-երեք օրից ենթակա է դուրսգրման: Դատավարության հերթական նիստը նշանակվեց հոկտեմբերի 29-ին:

Ակնհայտ է, որ Սիրադեղյանն ու նրա դատապաշտպանները իբրեւ պաշտպանական տակտիկայի առաջին քայլ ընտրել են դատավարությունը ձգձգելը, որին հասարակությունը զանազան մեկնաբանություններ է տալիս՝ հիմնականում բերանավատությամբ վերաբերվելով թե՛ դատավարությանը, թե՛ Սիրադեղյանի դատապարտվելուն: Հասարակության կարծիքը փորձեցինք ամբողջացնել՝ տարբեր մասնագիտության տեր մարդկանցից ցանկանալով ստանալ հետեւյալ հարցի պատասխանը. Ձեր կարծիքով կդատապարտվի՞ Վանո Սիրադեղյանը:

Թաղահական գործիչ– Եթե դատավարությունը տեղի ունենա՝ կդատապարտվի: Այլապես, ենթադրություններ կարելի է անել՝ նայած ում դիրքերը իշխանության մեջ կհզորանան:

Լրագրող– Վանոյի դատավճիռն անմիջականորեն կապված է քաղաքական իրավիճակի հետ: Շատ կարեւոր է, թե դատավճիռը պատրաստելու ժամանակահատվածում ինչպիսի փոխհարաբերության մեջ կլինեն իշխանական վերնախավի հետ: Չեմ բացառում, որ հնարավոր է նրան ներկայացված մեղադրանքի որոշ մասն ապացուցվի, եւ նա դատապարտվի: 95 տոկոսով նա կդատապարտվի, սակայն հոդվածների վերաորակում կլինի: Ասենք՝ կարող է եղածը պաշտոնական թերացում համարվել:

Տարեց վարորդ– Վանո Սիրադեղյանն այսօր էլ իրավիճակի տերն է, աշխատանք է տանում Արարատ Ջուրաբյանի ընտրվելու համար, եւ նա կընտրվի: Սիրադեղյանի կյանքում փոփոխություն չի կատարվել, նա նախկինի պես շարունակում է շրջել ամենապատրաստված թիկնապահներով: Այդ դատավարությունը հերթական հեռուստաներիալներից մեկն է: Թերթերում գրում են, հեռուստատեսությամբ ցույց են տալիս մեզ նմաններին զբաղեցնելու համար: Նա չի դատվելու:

Փաստաբան– Սիրադեղյանը դատավարությունը ձգձգելու հետ կապված հաշվարկներ է արել: Անկախ մեղադրանքի ապացուցված լինելուց, նրա դատավճիռը պայմանավորված է տվյալ պահի քաղաքական իրավիճակով:

Կուսակցական գործիչ– Այն փաստերով, որոնք դրված են սեղանին, հնարավոր չէ, որ չդատվի: Շատ բան կախված կլինի Հայաստանի քաղաքական իրավիճակից:

digitised by A.R.A.R.@

Ազգային

Թուրքիայի նախագահ Սուլեյման Դեմիրելի Բաքու կատարած այցից մեկ օր առաջ Անկարայի հեռուստատեսությամբ հաղորդվել էր Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիեւի հարցազրույցը, ուր, ինչպես տեղեկացրել ենք մեր ընթերցողներին, վերջինս կատարել էր մի շարք կտրուկ հայտարարություններ: Մասնավորապես, Ալիեւը ասել էր, թե Ադրբեջանը ոչ մի դարագայում չի համաձայնի ԵԱՀԿ Բաքուն ենթատեքստը: Բակվում արտասանած իր ճառում նա նրբորեն շոշափել է մի քանի հարցեր, որոնց վրա արժե ուշադրություն դարձնել:

1. Անկարան հասկացրել է, որ հակված չէ հանուն «կրտսեր եղբոր» մտնելու արկածախնդրական խաղի մեջ եւ սանձնելու ավելի մեծ դերակատարություն, քան մինչեւ այժմ: Այդ առթիվ Դեմիրելն ուղղակի ընդգծել է, թե «Թուրքիան իրավասու չէ Հայաստան-Ադրբեջան հաշտության թաքուն ենթատեքստը: Բակվում արտասանած իր ճառում նա նրբորեն շոշափել է մի քանի հարցեր, որոնց վրա արժե ուշադրություն դարձնել:

1. Անկարան հասկացրել է, որ հակված չէ հանուն «կրտսեր եղբոր» մտնելու արկածախնդրական խաղի մեջ եւ սանձնելու ավելի մեծ դերակատարություն, քան մինչեւ այժմ: Այդ առթիվ Դեմիրելն ուղղակի ընդգծել է, թե «մոտ օրերս դա կիրականանա», սակայն մի անգամ եւս ավելացրել է, թե «առանց Ռուսաստանի բարերար դերի այն հնարավոր չէ առաջանալ», «անկարելի է Ռուսաստանը դուրս թողնել ճգնաժամերը լուծելու աշխատանքներից»: Սա այլ բան չէ, եթե ոչ Բաքվի հակառուսական խաղաթղթի խփված լինելու հայտարարություն: Ավելի դարձ, սա նշանակում է խելքներդ գլուխներդ հավաքեք, ձեզ համար մենք ռուսների հետ թե «մոտ օրերս դա կիրականանա», սակայն մի անգամ եւս ավելացրել է, թե «առանց Ռուսաստանի բարերար դերի այն հնարավոր չէ առաջանալ», «անկարելի է Ռուսաստանը դուրս թողնել ճգնաժամերը լուծելու աշխատանքներից»: Սա այլ բան չէ, եթե ոչ Բաքվի հակառուսական խաղաթղթի խփված լինելու հայտարարություն: Ավելի դարձ, սա նշանակում է խելքներդ գլուխներդ հավաքեք, ձեզ համար մենք ռուսների հետ

ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՐՑ

Դեմիրելը սթափության է կոչում... Ալիեւին

Մինսկի խմբի եռանախագահների առաջ քաշած «ընդհանուր դեսության» գաղափարին, որովհետեւ, ըստ իրեն, այդ գաղափարը դատապարտում է Ռուսաստանին: Ալիեւն այդ հարցազրույցում կրկին շեշտել էր «գրավյալ տարածքները» վերադարձնելու եւ նոր միայն բանակցությունները վերսկսելու նախադայմանը: Տրավորությունն այն էր, կարծես թե մինչ այդ չէին եղել Ալիեւի եւ Քոչարյանի նախորդ 4 հանդիպումները կամ, առնվազն, այդ անմիջական հանդիպումների ժամանակ Քոչարյանն այդ կարգի ինչ-ինչ հանձնառություններ էր ստանձնել:

Ալիեւի այս «կոշտ» հարցազրույցը, սակայն, այլ մեկնաբանություն ունի: Ավելի հավանական է թվում, որ դա մի վերջին, գուցեեւ հուսահատ փորձ էր դիմելու թուրքական հասարակական կարծիքին եւ հարկադրելու «մեծ եղբորը» սատար կանգնելու Ադրբեջանի իսկապես անհեռանկար կեցվածքին, Թուրքիային ներքաշելու բանակցային գործընթացի մեջ շահարկելով Բաքվի հակառուսականությունը: Դեմիրելը, ինչպես երեւում է, շատ լավ է հասկացել Ալիեւի հարցազրույցի ուղղությամբ ծագրերին անմիջականորեն միջամտել», որքան էլ «զգում է այն կսկիծը, ինչ զգում է Ադրբեջանի ժողովուրդն» իր 20 տոկոս «գրավյալ տարածքների համար»: Այստեղ ամենաուշագրավն այն է, որ առաջին անգամ Անկարան բացեիբաց հայտարարում է, թե Բաքուն հույս չտիտի դնի Թուրքիայի «ուղղակի միջամտության» վրա ոչ իբրեւ միջնորդի, ոչ իբրեւ խաղաղարարի:

2. Ուղղակի պատասխանելով Ալիեւի հարցազրույցի սադրիչ հարցադրմանը, թե ԵԱՀԿ Մինսկի խմբի եռանախագահների «ընդհանուր դեսության» գաղափարը բխում է Ռուսաստանից եւ իբր դրանով իսկ մերժելի է, Դեմիրելը մի քանի անգամ շեշտել է, որ արցախյան հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացից ռուսներին «դուրս թողնելու» Բաքվի գայթակղությունն անհիմն է: «Կովկասում հնարավոր չէ հաշտության մասին խոսել առանց նկատի առնելու Ռուսաստանին, ասել է նա, Ռուսաստանը տակավին դահում է մեծ դեսություն լինելու իր ներուժը»: Կոնկրետ հայ-ադրբեջանական հաշտության առթիվ Դեմիրելը հույս է հայտնել, բախվելու ոչ մի ցանկություն չունենք, եւ եթե նույնիսկ ԵԱՀԿ Մինսկի խմբի եռանախագահների «միասնական դեսության» գաղափարը բխում է Ռուսաստանից, ապա մերժելուց առաջ ծանրութեթեւ արեք:

Դեմիրելի այս հանկարծական «ռուսասիրությունը» եւ Ռուսաստանի դերի ընբռնումը շատ դարձ բացատրություն ունի:

ա) Անկարան հասկանում է, որ եռանախագահների առաջարկությունները, անկախ նրանից, թե ումի՞ց են բխում, ներկայացվում են երեք հզորների՝ ԱՄՆ-ի, Ռուսաստանի եւ Ֆրանսիայի լիակատար համաձայնությամբ, իբրեւ միասնական տեսակետ: Մերժել մեկին, նշանակում է մերժել բոլոր երեքին միաժամանակ այստեղից բխող բոլոր անցանկալի հետեւանքներով:

բ) Անկարան հասկանում է, որ ԱՄՆ-ը «մեծ հույսեր է կապում ԵԱՀԿ Մինսկի խմբի գործունեության հետ», ինչպես այդ առթիվ հայտարարեց ԱՄՆ-ի պետքարտուղարի նորանկախ պետությունների գծով խորհրդական Սթիվեն Սեսանովիչը Երեւանում, հոկտեմբերի 20-ին: Հետեւաբար, ակնկալել, թե եռանախագահների միջեւ հնարավոր կլինի «սեպ խրել» եւ «խաղալ» նրանց տարաձայնությունների վրա առայժմ անհեռանկար գործ է:

գ) Անկարան շատ սթափորեն է գնահատում հյուսիսկովկասյան տարածաշրջանից երբեւէ «դուրս չգալու» Մոսկվայի կեցվածքը եւ լուրջ է վերաբերվում Չեչնիայում ռուսների ձեռնարկած պատժիչ գործողություններին: Այստեղ ահաբեկիչներին ոչնչացնելու համար հասել էր Սթիվեն Սեսանովիչը Երեւանում: Այս հեռանկարը հազիվ թե ոգեւորում է ԵԱՀԿ երկրների ղեկավարներին, եւ նրանք ուրախ կլինեին այդ ոլորտի ճնշարկման փոխարեն սահմանափակվել Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ վերսկսված բանակցությունները կամ այդ առթիվ նկատելի առաջընթացը ողջունելով: Հայաստանն այս տեսակետից նախաձեռնությունը պահում է իրեն՝ հավատալով ԵԱՀԿ Մինսկի խմբի եռանախագահների առաջարկած «միասնական դեսությունն» հիմքով բանակցությունները վերսկսելու իր պատրաստակամությունը: Ադրբեջանը, հակառակը, խոչընդոտում է դրան: Սամբուլյան վեհաժողովում հարցի «հատուկ ճնշարկման» դեմքում ԵԱՀԿ-ն սահմանված կլինի արձանագրել հայկական կողմի բարյացակամությունը եւ ադրբեջանական կողմի ոչ կառուցողական դիրքորոշումը, իսկ դա չափազանց կնվազեցնի Թուրքիայի հնարավորությունները սատար կանգնելու «կրտսեր եղբոր» կամակորություններին: Ուստի Դեմիրելի Բաքվի ելույթը այլ բան չէր, եթե ոչ կամակորությանը վերջ տալու հորդոր ուղղված Ադրբեջանի ղեկավարությանն ու ժողովրդին: Թուրքիայի փորձված ղեկավարը հասկանում է, որ միջազգային հանրությունը մտադիր չէ երկար հանդուրժել արցախյան հակամարտության չկարգավորվածությունն ու անորոշությունը: Այդ անորոշության մշուշը ցրելու պահը մոտենում է, եւ բոլորի համար ցանկալի կլիներ, եթե այդ արվեր դեռ մինչեւ սամբուլյան հանդիպումը:

ՌԱՖԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Արմենտել. Գործարք, որից վերադարձ չկա

Նախարարներ են փոխվում, ներդրումները չեն կատարվում

Արմենտելի գործարքի կանաչ լույսը 97 թ. դեկտեմբերի 9-ին վառեց այն ժամանակ կառի նախարար Գրիգոր Պողոսյանը, որից հետո հունական OTE ընկերությունը դարձավ մենաշնորհային սեփականատերը Հայաստանի հեռահաղորդակցային ցանցի: Հայաստանի կառավարության ձեռքում մնաց բաժնետոմսերի 10 տոկոսը եւ ներդրումային ազդեցիկ մի ծրագիր՝ 264 մլն դոլար: Այդ օրվանից փոխվել են նախարարներ, բայց սեփականաշնորհված Արմենտելի շուրջ անընդմեջ սրեր են բախվում, կառի որակը ոչ միայն չի բարելավվում, այլեւ բարձրացող սակագների հետեւանքով կրճատվում է այդ կառից օգտվելու ունակ հայաստանյան քաղաքացիների թիվը: Գրիգոր Պողոսյանին հաջորդեց Արտակ Վարդանյանը, այսօր Ռուբեն Տոնոյանն է փոստի եւ հեռահաղորդակցության նախարարը, նրա շուրջ եւս թուխթեր են:

98 թ. մարտի 1-ից OTE ընկերությունը ստանձնեց Արմենտելի սեփականաշնորհման իրավունքը, այսինքն՝ 98-ի մարտի 1-ից է միացված ժամացույցը, որի սլաքներով պետք է ստուգվի ներդրումային ծրագրի կատարման ընթացքը: 98 թ. մարտի 1-ից մինչեւ այս տարվա մարտի 1-ը Արմենտելը պետք է ներդներ շուրջ 70 մլն դոլար, սակայն այդ ներդրումները կազմեցին ընդամենը 14 մլն: Կանխելու համար հասունացող խոովությունը, Հայաստան ժամանեց OTE-ի պատգամավորների մի մեծ խումբ, եւ Ջ. Կարաքլիսը խոստացված 200 մլն ներդրումների փոխարեն հայաստանյան կառավարությանը «ավետեց» եւս 64 մլն դոլարի հատկացման որոշումը: Այսպիսով, OTE-ի կողմից Հայաստանի հեռահաղորդակցային ցանցում ներդրվելիք ընդհանուր գումարը հասավ 264 մլն դոլարի, հույներն, իրենց հաշոզմամբ, ծիու քայլ կատարեցին՝ փորձելով չեզոքացնել կառավարության դժգոհությունը: Սակայն այսօր արդեն ակնհայտ է, որ գումարները խոստացվում են, սակայն կանխիկ դրամ չեն դառնում:

Փոստի եւ հեռահաղորդակցության նախարար Ռուբեն Տոնոյանը փաստում է, որ Արմենտելն ընդամենը 20 մլն դոլար է ներդրել, այն դեպքում, երբ բոլոր կառի ձեռնարկությունների համախառն եկամուտը կազմում է 35 մլրդ դրամ՝ 65 մլն դոլար: Նրանց մատուցած ծառայությունների ընդհանուր գումարային ծավալը 20 մլրդ դրամ է կամ 37 մլն դոլար: Նման ազդեցիկ եկամուտների պարագայում Արմենտելի ղեկավարության համար ներդրումներ կատարելու համար պետք է որ անգամ անհրաժեշտ չլիներ դիմել հունական մայր OTE-ին, հայկական ցանցի շահագործումից ստացվող գումարները բավարար են կառի զարգացման եւ ընդլայնման համար: 98 թ. ապրիլից Արմենտելը 6 անգամ բարձրացրեց հեռախոսակառից օգտվելու համար գանձվող սակագները: Ի հետեւանս՝ սակագների բարձրացումից հետո 2,7 տոկոսով նվազեց գյուղական եւ քաղաքային բաժանորդների թիվը: Մարդիկ գումարներ չունենալու պատճառով հրաժարվում են հեռախոսից՝ պատրաստվելով 21-րդ դար մուտք գործել առանց կառի բնագավառում արդեն ամենապարզունակ այս սարքի: 38,9 տոկոսով կրճատվել է ԱՊՀ երկրներ խոսակցությունների թիվը, 4,4 անգամ՝ այլ երկրների հետ հայաստանցիների խոսակցությունները: Այսպիսով Արմենտելը կամա թե ակամա դառնում է հայաստանցիներին ոչ թե աշխարհի կամ միմյանց հետ կամրջող ցանց, այլ տարանջատող:

Ի՞նչ կարելի է անել՝ լինելով բաժնետոմսերի 10 տոկոսի տեր

Մեր կառավարությունը, ի մասնավորի՝ վարչապետը փորձում է գտնել 10 տոկոս պետական բաժնետոմսերի տիրոջը, որն ի պատշոնե պետք է լինի փոստի եւ հեռահաղորդակցության նախարարը: Վարչապետը չի՞ վստահում նախարարին: Այլ կերպ անհնար է բացատրել վերջին խորհրդակցությունում Վազգեն Սարգսյանի առաջարկությունը. «Արմենտելի պետական 10 տոկոսի բաժնեմասի համար պիտի նշանակվի պետական ներկայացուցիչ, որն իրեն տեր զգա»: Արմենտել-ՀՀ կառավարություն առաջին սրամարտի արդյունքը վերջերս տեղի ունեցած դատավարությունն էր, որի շնորհիվ մեր կառավարությունը հաջողեց պայմանավորվել OTE-ի հետ, որ ՀՀ պետբյուջե վճարվի Արմենտելի սեփականաշնորհումից հետո պետությանը չվճարված մայր շահութահարկը՝ 8 մլն դոլար, սակայն ուժի մեջ մտած դատավճռով մեր կառավարությունը փաստացի հրաժարվեց 10 մլն դոլար տույժ-տուգանքներից, որոնք գոյացել են շահութահարկի չվճարման հետեւանքով: OTE-ն իր հերթին Լոնդոնի արբիտրաժային դատարանում փորձում է TWT-ից ստանալ հիշյալ գումարները: Հայաստանի համար տվյալ պահին TWT-ն անցյալի գործընկեր է, հետեւաբար նրա հետ կապված հարաբերությունների պարզաբանումն այսօր կարելի է համեմատել ծախորդ կովից հետո բռունցքներ բախ տալուն: Ներկա գործընկերը OTE-ն է: Կառավարության գենը նախ 10 տոկոս բաժնետոմսերն են եւ ապա գործարքի պայմանագիրը. «Սեփականաշնորհումը եղել է որոշակի պայմաններով», վկայակոչում են մեր նախարարները, բայց պայմանները չեն կատարվում, գյուղական մարզերում հեռախոսակառ ընդհանրապես չի գործում, իսկ Երեւանում նրա որակը եւ առաջարկվող ծառայությունների թիվը չափազանց հեռու է միջազգային չափանիշներից, փոխարենը սակագները գերազանցում են միջազգայինը: Վկան՝ Վրաստանի եւ Ադրբեջանի դարձյալ սեփականաշնորհված հեռահաղորդակցության ոլորտը, որտեղ սակագները գրեթե 1,5 անգամ ավելի ցածր են, քան Հայաստանում՝ թե սովորական, թե շարժական հեռախոսակառի, Ինտերնետի եւ այլնի:

Մարզպետները եւ նախարարը պահանջատեր են

Վարչապետն առաջարկեց նախարարին եւ մարզպետներին պահանջատեր դառնալ, սակայն պահանջատիրության մարտավարությունը դեռ մշակված չէ. մինչեւ 2000 թ. մարտի 1-ն Արմենտելը պետք է իրականացնի 100 մլն դոլարի ներդրումային իր ծրագիրը, որից, ինչպես նշեցինք, ընդամենը 20-ն է այս պահին իրականացված: Տեսականորեն, իհարկե, Արմենտելը կարող է 2000 թ. փետրվարի 28-ին 80 մլն դոլար ներդնել, բայց գործնականում դա անհնար է: Փոստի եւ հեռահաղորդակցության նախարար Ռուբեն Տոնոյանը հրապարակավ հավաստում է՝ մինչեւ 2000 թ. մարտ Արմենտելը պետք է ներդնի 80 մլն դոլար, եթե ոչ՝ ընկերության պետական բաժնեմասի պայմանագիրը կլուծարվի: Պայմանագրի լուծարումն արդեն ոչ թե մարտավարություն է, այլ ռազմավարություն: Չմոռանանք նաեւ Արմենտելի մենաշնորհային սեփականատեր լինելու հանգամանքը: Երբ «Ազգը» էկոնոմիկայի նախարար, նախկին վարչապետ Արմեն Դարբինյանից հետաքրքրվեց, թե ի՞նչ տրամաբանությամբ է այդ մենաշնորհը պայմանագրով ամրագրվել: Մենաշնորհ, որի պատճառով եվրաբանկն այսօր հրաժարվում է Հայաստանի հեռահաղորդակցության ոլորտին այդքան անհրաժեշտ վարկերը տրամադրելուց, իսկ Առեւտրի համաշխարհային կազմակերպությունն էլ խոչընդոտում է մեր անդամակցությանը, նա պատասխանեց. «Ընտրության հարց էր, կամ մոնոպոլ իրավունքներ պետք է տրամադրվեին, եւ գինը 206 մլն դոլար լիներ, կամ մենաշնորհը չտրվեր, եւ այդ դեպքում խոսքը գնար 25-30 մլն գնի մասին: Ի վերջո, աշխարհի փորձը ցույց է տալիս, որ ցանցի զարգացման համար մենաշնորհային իրավունք պետք է տրամադրվեր: Եվ չմոռանանք, որ մենաշնորհի իրավունքը տրամադրված է ընդամենը 15 տարով: Մենք խոսում ենք այս երկրի մասին ոչ թե մի քանի տարվա կտրվածքով, այլ հեռահար եւ ապագայի նպատակներով: Կառավարությունն ընտրեց. ավելի լավ է տրամադրել մենաշնորհ՝ զարգացման հստակ նախադրյալներ ամրագրելով եւ ստանալով ամենաբարձր գինը, քան այդ պահին ձեռք բերել ամենացածր հնարավոր գինը, մենաշնորհ չտրամադրել եւ հայտնվել զարգացման տեսանկյունից անհասկանալի վիճակում: Մեզ համար ծիշտ էր այս ճանապարհը»: Երբ մենք հարցրինք, թե որտե՞ղ են այդ դեպքում «զարգացման հստակ նախադրյալները», ներդրումները չեն կատարվում, Արմեն Դարբինյանն ասաց. «Իրավունքների պատշաճության այլ մեխանիզմ, քան դատականը, չկա, եթե սեփականատերը չի կատարում պարտավորությունները, պետք է դիմել դատարան: Ես, սակայն, համոզված եմ, որ պարտավորությունները կկատարվեն, դա բխում է հունական ընկերության եւ Արմենտելի շահերից: OTE-ն եվրոպական առաջատար ընկերություններից է, պատահական մարդիկ չեն, լրջագույն գործընկեր է, որի միայն առկայությունը մեր շուկայում դրական փաստ է»:

Սպասենք 2000 թ. փետրվարի 28-ին՝ վերջին ժամկետին, որ կարողանան OTE-ի լրջագույն գործընկեր լինել-չլինելու փաստը, ինչպես նաեւ մեր կառավարության պահանջատիրությունը:

ՆԱԲԻԼԵ ԳԻԼԲԱՐՅԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Ամփոփում

ԱՇԽԱՐՀԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆ

6 միլիարդը տղավորիչ է, բայց նաեւ ողբերգական

ՄԱԿ-ի ժողովրդագիրների տվյալներով, այս տարվա հոկտեմբերի 12-ին մեր մոլորակի բնակչությունը պետք է հասներ 6 միլիարդի սահմանագիծը: Իհարկե, ժողովրդագիրները կարող էին ժամկետի հարցում փոքր-ինչ սխալվել. դա չէ էականը: Կարեւորն այն է, որ ներկայումս աշխարհի բնակչության թիվը պաշտոնապես արդեն 6 մլրդ է, եւ մյուս բոլոր հաշվարկները կասարվում է ըստ այդմ:

6 միլիարդը միաժամանակ տղավորիչ է, մխիթարիչ եւ ողբերգական: Տղավորիչ է, քանզի վերջին հարյուրամյակում աշխարհի բնակչությունը գրեթե քառապատկվել է: Մխիթարիչ է, քանզի վերջին տասնամյակներում բնակչության արագ աճը չհանգեցրեց աղետալի հետեւանքների: Բայց 6 միլիարդն այնուամենայնիվ ողբերգական է, քանի որ մոլորակի բնակչությունն ավելանում է տարեկան 84 միլիոնով, ըստ որում աճը տեղի է ունենում -առավելապես աղքատ երկրներում, խորացնելով առկա թշվառությունները:

Հարյուր տարի էր պահանջվել, որպեսզի աշխարհի բնակչությունը մեկ միլիարդից հասներ 2 միլիարդի: Մինչդեռ վերջին 6-րդ միլիարդի համար պահանջվեց ընդամենը 13 տարի: Աշխարհում գրեթե ամենուրեք ծնունդը նվազում է. վերջին քառորդ դարում մեկ կնոջ երեխաների թիվը 4,1-ից իջել է 2,7-ի: Միաժամանակ, ավելանում է կյանքի տեւողությունը. 1970 թ. այն կազմում էր 59,1 տարի, իսկ 1997 թ.՝ 66,7: ՄԱԿ-ի զարգացման ծրագրի վերջին զեկուցագրում նշվում է, որ ժողովրդագրական այս փոփոխությունները հնարավոր են դարձել մոլորակի բնակչության ընդհանուր բարեկեցության բարձրացման շնորհիվ: Վերջին 50 տարիներին մեկ բնակչի միջին եկամուտը եռապատկվել է, իսկ համաշխարհային մասշտաբով ներքին համախառն արտադրանքը՝ տասնապատկվել: 1965 թ. ի վեր մանուկների մահացությունը կիսով չափ կրճատվել է, իսկ դպրոց հաճախող երեխաների թիվը՝ եռապատկվել: Աշխարհի երեխաների երեք քառորդը հաճախում է տարրական դպրոց: 1990 թ. ի վեր չափահասների գրագիտության մակարդակը բարձրացել է 10 տոկոսով, իսկ միջնակարգ կրթության համակարգում ընդգրկված աղջիկների թիվը 36 տոկոսից հասել է 61-ի:

Բայց այս հաջողությունների հետ միաժամանակ առկա են զգալի տարբերություններ: Մոլորակի բնակչության 20 տոկոսը կազմող ուներները տիրում են բոլոր հարստությունների 80 տոկոսին: Մինչդեռ տնտեսական եւ առողջապահական դժվարություններից տառապող չափավոր մեծամասնությունը շարունակում է աճել արագ տեմպերով: Հաջորդ հարյուրամյակի կեսերին աշխարհի երեխաների կեսը ծնվելու է Աֆրիկայում: ՄԱԿ-ի տվյալներով, ներկայումս 1,3 մլրդ անձանց եկամուտները օրական 1 դոլարից պակաս են: Բայց նույնիսկ աղքատ ու հետամնաց երկրներում 1970 թ. հետո կյանքի տեւողությունն ավելացել է եւ ներկայումս կազմում է միջին հաշվով 64,4 տարի (Սահարայից հարավ ընկած աֆրիկյան երկրներում այդ ցուցանիշը 48 տարի է):

Չնայած կաթոլիկ եկեղեցու եւ իսլամի ընդդիմությանը, հակաբեղնավորիչ միջոցները սկսել են տարածվել աշխարհի ամենաարբեր մասերում: Չինաստանում պետական մակարդակով սահմանափակում են ծնունդները. եթե 1975 թ. մեկ ընտանիքում կար միջին հաշվով 3,9 երեխա, ապա այսօր այդ ցուցանիշն իջել է 1,8-ի: Ուսուցման համակարգում կանանց ընդգրկումը նույնպես սահմանափակել է ծնունդները. մասնավորապես Ասիայում եւ Հարավային Ամերիկայում: Սակայն երբեմն կիրառվում են արմատական միջոցներ: Ժողովրդագիր Անրի Լերիդոնի տվյալներով, ամլացումը ներկայումս աշխարհում դարձել է հակաբեղմնավորիչ առաջին միջոցը: Իսկ դա ուրախության տեղիք չի տալիս:

Արդյունաբերապես զարգացած երկրները, մասնավորապես եվրոպական պետությունները, տոգորված են հոռետեսական կանխագուշակություններով: Եվրոպայում մեկ կնոջը ընկնում է միջին հաշվով 1,46 ծնունդ: Իսկ Իտալիայում եւ Իսպանիայում այս ցուցանիշը էլ ավելի ցածր է՝ 1,2: Համեմատաբար Իտալիայում բնակչության 17,3 տոկոսը 65-ից բարձր տարիք ունի, Շվեդիայում՝ 17,5 տոկոսը: Այսօր մոլորակի բնակչության միջին տարիքը 26,1 է, իսկ 2050 թ. կլինի 37,8:

ՄԱԿ-ի տվյալների համաձայն, մյուս ընդհանուր երեւույթը գյուղերի բնակչության կրճատումն է՝ հօգուտ քաղաքների, որտեղ 2025 թ. ապրելու է մոլորակի բնակչության կեսից ավելին: Այժմ արդեն կա 8 մլն-ից ավելի բնակիչ ունեցող 22 մեգապոլիս: Իսկ 15 տարի հետո դրանց թիվը կհասնի 33-ի: Բոմբեյը, Լագոսը, Կարաչին կունենան 20 մլն-ից ավելի բնակիչ:

Արդեն առնվազն երկու դար է, ինչ մեզ վախեցնում են սովահար, գերբնակեցված եւ ընչահեղձ լինող մոլորակի ուրվականով: 18-րդ դարի վերջերին տնտեսագետ Թոմաս Մալթուսը ասում էր, որ բնակչությունն աճելու է երկրաչափական պրոգրեսիայով, մինչդեռ սննդի պաշարները ավելանալու են թվաբանական պրոգրեսիայով: 1960-ական թթ. ՄԱԿ-ը մոայլ կանխատեսում արեց, թե 2000 թվականին երկրագնդի վրա 7 մլրդ մարդ է ապրելու, իսկ 2050 թ.՝ 20 մլրդ, եւ որ դա աղետալի է լինելու: «Հռոմի ակումբը» իր հերթին 1972 թ. առաջարկեց բնակչության աճը կանգնեցնել հաջորդ դարավերջին աղետից խուսափելու համար: Ժողովրդագիրների տվյալների համաձայն, մեկ դար հետո աշխարհի բնակչությունը կարող է կրկնապատկվել եւ վերջնականապես կայունանալ:

Պ. Ք.



ԶԵԿՈՒՅՑԱԳԻՐ

Ամենից շատ զենք գնում են Միջին Արեւելքի եւ Հյուսիսային Աֆրիկայի երկրները

Օրերս լույս է տեսել Լոնդոնում գտնվող «Ռազմավարական հետազոտությունների միջազգային ինստիտուտի» (ՌՀՄԻ) նոր զեկուցագիրը, համաձայն որի Միջին Արեւելքի եւ Հյուսիսային Աֆրիկայի երկրները դեռեւս ամենից շատ զենք ներմուծողներն են աշխարհում: Դրանց համընդհանուր գնումների արժեքը 1998 թ. հասել է 61 մլրդ դոլարի: Ի դեպ, ամենաշատ զենք ներկրողը Սաուդյան Արաբիան էր, որն այդ նպատակով ծախսել է ավելի քան 10 մլրդ դոլար:

Ըստ ՌՀՄԻ-ի զեկուցագրի, չնայած նավթագների նվազմանը, որն իր ազդեցությունն ունեցավ տարածաշրջանի տնտեսությունների վրա, «ռազմական ծախսումների չափը զարմանահարույց չէ՝ շարունակվող լարվածությունների լույսի ներքո»: Ընդ որում, նույն աղբյուրը գտնում է, որ այս տարի նվազել են ռազմածախսերը: Միեւնույն ժամանակ, զեկուցագիրը նշում է քաղաքական մի քանի կարեւոր զարգացումներ, որոնցից է նոր կառավարության ընտրությունն Իսրայելում, ինչը «նպաստավոր գործոն էր Լիբանանի հարավում լարվածությունը թուլացնելու համար»: Այս ծիրում մեջբերվում է նաեւ թագաժառանգների սահուն անցումն իշխանության Հորդանանում եւ Մարոկկոյում: Իսկ Լիբիայի հարաբերությունները բավականին բարելավվել են արտաքին աշխարհի հետ:

ՌՀՄԻ-ի զեկուցագրի համաձայն, Սիրիայի եւ Իսրայելի միջեւ լարվածությունը թուլացնելու հավանականությունը չխանգարեց երկու երկրներին՝ ավելացնելու իրենց ռազմական կարողությունները: Իսկ Պարսից ծոցում իրաքյան արգելված զենքերի ծրագրերի խնդիրը չլուծելն, ըստ նշյալ աղբյուրի, նշանակում է, որ անվտանգությունը դեռ այնտեղ բացակայում է:

Հարկ է նշել, որ այս տվյալները քաղել ենք BBC-ից եւ համաձայն չենք «Ռազմավարական հետազոտությունների միջազգային ինստիտուտի» զեկուցագրի քաղաքական գնահատականներին ու մեկնաբանությանը, քանզի դրանք այնքան էլ առարկայական չեն եւ շարադրված են անգլիական շահերի տեսանկյունից:

Բեն Ալի. ցկյանս նախագահ, բայց փուլերով

Կարթագենցիների հայրենիքում՝ Թունիսում, հոկտեմբերի 24-ին տեղի ունեցան ընդհանուր՝ նախագահական եւ խորհրդարանական ընտրություններ: 1956 թ. երկրի անկախությունից ի վեր առաջին անգամ նախագահի պաշտոնի համար մրցակցում էին մեկից ավելի թեկնածուներ: Թեեւ բոլորը վստահ են, որ ձայների 99 տոկոսով 1989 թ. եւ 1994 թ. ընտրություններում հաղթած այժմյան նախագահ Զեյնուլ-Աբիդին բեն Ալին էլի կհաղթի, բայց եւ այնպես վերջինս ինքն իր դեմ է կանգնեցրել 2 ծեւական հակառակորդների, որոնք չեն թաքցրել, որ «իրենց մասնակցությունը չափազանց խորհրդանշական է եւ նպատակաուղղված է ցույց տալու աստիճանական միտումը դեպի ժողովրդավարական համակարգ»: Ի դեպ, նման սցենար, բայց մեկ ծեւական մրցակցով, վերջերս կիրառվեց Եմենում, ի հետեւանս որի նախագահ Ալի Աբդուլահ Սալեհը մնաց իր պաշտոնում:

Զեյնուլ-Աբիդին բեն Ալին նախագահ դարձավ 1987 թ. նոյեմբերի 7-ին, երբ պաշտոնանկ արեց իր նախորդին՝ 30 տարվա նախագահ Հաբիբ Բուրգիբային: Մինչ այդ, բեն Ալին զինվորական ուսում էր ստացել ԱՄՆ-ի եւ Ֆրանսիայի բուհերում: Այնուհետեւ նա զբաղեցրել է բազմաթիվ կարեւոր պաշտոններ, հիմնականում՝ ռազմական, անվտանգության եւ դիվանագիտական ոլորտներում: Իսկ 1987 թ. հոկտեմբերին, հենց Բուրգիբայի հրամանագրով, բեն Ալին վարչապետ նշանակվեց: Այդ ժամանակ վարչապետ բեն Ալին կազմակերպեց «բժշկական հեղաշրջում» ցկյանս նախագահ Բուրգիբայի դեմ: Վերջինս 7 բժիշկների ստորագրությամբ ճանաչվեց ոչ պիտանի երկրի կառավարման համար: Ապա, ըստ սահմանադրության, նրա տեղը գրավեց գեներալ Զեյնուլ-Աբիդինը, որն իր ձեռքում կենտրոնացրեց զինված ուժերի հրամանատարությունը եւ իշխող կուսակցության՝ «Դեմոկրատական սահմանադրական միության» ղեկավարությունը: Թունիսցիները չառարկեցին թավշյա այդ իշխանափոխությանը, որը նախորդ պաշտոնում էին բանակի սպայակույտի եւ նախարարների մեծ մասը:

Ինչեւէ: Հենվելով ընտրությունների նախնական տվյալների վրա, հոկտեմբերի 25-ի առավոտյան բոլոր լրատվական միջոցները հավաստիացնում էին, որ 63-ամյա բեն Ալին եւս 5 տարի բազմելու է Թունիսի գահին, իսկ նրա կուսակցությունը կրկին մեծամասնություն է կազմելու խորհրդարանում: Եթե Բուրգիբան ըստ սահմանադրության էր «ցկյանս նախագահ», ապա նրան փոխարինողն այդպիսին է լինելու «չգրված սահմանադրության» համաձայն, քանի որ նա վերացրեց այդ սկզբունքը երկրի հիմնական օրենքից:

Ա. ՄՈՎՍԵՍՅԱՆ

Լիսվան կփակի Իգնալինայի ԱԷԿ-ը

Եվրամիության կազմի մեջ մտնելու ձգտումն ի վերջո ավելի ուժեղ գտնվեց, քան լիսվացիների ազգայնական փասարկները: Մի քանի տարի տեւած ձգձգումներից ու վարանումներից հետո Լիսվան այնուամենայնիվ որոշեց փակել Իգնալինայի ատոմակայանը: Երկու ռեակտորից բաղկացած այդ ԱԷԿ-ը Չեռնոբիլի տիպի է եւ համարվում է տվյալ կարգի 6 ամենավտանգավոր ատոմակայաններից մեկը, որոնց շարքում է գտնվում, ինչպես գրել էինք նախապես, Հայկական ԱԷԿ-ը: Իգնալինայի ԱԷԿ-ի հնարավոր վթարի հեռանկարը սարսափեցնում է Բալթիկ ծովի շուրջ ընկած երկրներին: Մասնավորապես Սկանդինավյան պետությունները վերջին տարիներին մասնագետներ են գործուղել ԱԷԿ-ի ռեակտորների անվտանգությունն ուժեղացնելու նպատակով: Չնայած դրան, միջազգային էներգետիկ եւ բնապահպանական որոշ կազմակերպություններ վտանգավոր են համարում Իգնալինայի ԱԷԿ-ի աշխատանքը:

Եվրամիությունն այդ ատոմակայանի փակումը նախապայման դարձրեց Լիսվայի անդամակցության համար: Լիսվան երկար ժամանակ մերժում էր Եվրամիության պահանջը՝ դա համարելով անընդունելի թելադրանք, քանի որ Իգնալինայի ԱԷԿ-ը բավարարում է երկրի էներգետիկ կարիքների 77 տոկոսը: Դա նշանակում է, որ Լիսվան աշխարհում միջուկային էներգիայից ամենամեծ կախման մեջ գտնվող երկիրն է: «Պուեն» շաբաթաթերթը տեղեկացնում է, որ միջուկային անվտանգության միջազգային համաձայնագրի պահանջներից ելնելով Լիսվայի կառավարությունն ու խորհրդարանն օրերս ճարահատյալ պարտավորվել են մինչեւ 2005 թ. փակել ԱԷԿ-ի առաջին բլոկը: Ինչ վերաբերում է երկրորդին, դրա հարցը կլուծվի 2007 թ., բայց երկրորդ ռեակտորը կփակվի ավելի ուշ՝ մինչեւ 2010 թ.:

Ատոմակայանի փակման հետ կապված վիթխարի ծախսերը հոգալու համար Լիսվան, իհարկե, ակնկալում է ֆինանսական օգնություն ստանալ Եվրամիությունից: Լիսվական ջերմաէլեկտրակայանների ընդհանուր հզորությունը բավական կլինի ատոմակայանին փոխարինելու համար: Բայց դրանց աշխատանքն ավելի թանկ կնստի եւ միաժամանակ երկիրը կախման մեջ կդնի ռուսական նավթից: Իսկ լիսվացիներին այդ հեռանկարը բնավ չի ոգեւորում: Լիսվայի էներգետիկայի նախարարն արդեն հայտարարել է, որ իր երկիրը շուտով Թեհրանի հետ բանակցություններ է սկսելու իրանական նավթի հնարավոր ներմուծման շուրջ:

Սերբիա. Ընդդիմությունը չի ուզում հանձնել Միլոշեւիչին

Սերբիայի նախագահ Սլոբոդան Միլոշեւիչի ընդդիմախոսները պարբերաբար հանդես են գալիս երկրում ժողովրդավարական համակարգի կառուցման կոչերով, բայց երբ գալիս է գործելու ժամը, նրանք նահանջում են: Եվրամիության ղեկավարների կարծիքով, միայն սրանով կարելի է բացատրել այն փաստը, որ սերբ հայտնի ընդդիմադիրները չներկայացան միության 15 երկրների արտգործնախարարների լյուքսեմբուրգյան հանդիպմանը, թեեւ հրավիրված էին: «Պուեն» հանդեսը նշում է, որ հանդեսին ներկա չէին ոչ սերբ ընդդիմադիրների գլխավոր գործիչ Վուկ Դրաշկովիչը, ոչ ժողովրդավարական կուսակցության ղեկավար Զորան Ջինջիչը, ոչ էլ Դրագոլյուբ Ավրամովիչը, որը համարվում է ստեղծվելիք անցումային կառավարության ամենահավանական ղեկավարը:

Այդ երեք գործիչներն ավելի ուշ լրագրողներին հայտարարեցին, որ իրենք չէին կարող ներկա գտնվել այդ հանդիպմանը, քանի որ եվրամիությունը նախապայման էր դրել, սերբ ընդդիմադիրները պետք է պարտավորություն ստանձնեին իշխանության հասնելու դեպքում Միլոշեւիչին հանձնել Հաագայում գործող Միջազգային քրեական դատարանին: Իսկ դա անընդունելի էր:

Եվրամիությունը խոստացել էր ձմռան համար նավթ հասկացնել սերբական այն համայնքներին, որոնց ղեկավարներն ընդդիմության ներկայացուցիչներ են: Բայց այդ խոստումն առանձնակի ազդեցություն չգործեց սերբ ընդդիմադիրների դիրքորոշման վրա, չնայած Սերբիան շարունակում է տուժել ՄԱԿ-ի հաստատած նավթային բեռնարգելքից:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մշակույթ

Նա չի կարող իջնել բեմից

Իշխան Ղարիբյանի դիմանկարը

Հրանից ներգաղթած «առաջին ծիծեռնակներից» երեք շաբաթ էին՝ 1946-ի սեպտեմբերի 1-ին թատերական ինստիտուտում ուսումնական տարին սկսելու համար: Իշխան, Շարեհ, Հայկ. բեղ հագուկառով այս երեքը ցնցեցին պատերազմական օրերից հնամաշ հագուստին ու շինելին սովոր ուսանողներիս: Կարծես երազից լինեին՝ բարեկիրթ, ասպետ, էլեգանտ: Աղջիկներս հալվում էինք իրենց ուշադրությունից: Եվ... մի ցնցում. Իշխանն ուսաբախվեց պարի դասին, եւ «Շտապ օգնությունը» տարավ հիվանդանոց: Երեք օր անոթի էր եղել... Շուտով ներգաղթեցին Իշխանի ու Հայկի ծնողները, եւ տղաները լքեցին հանրակացարանը: Վերը հիշած երեքը դեռեւս Թբիլիսում բենական դպրոց էին անցել թատերախմբերում եւ արդեն 2-րդ կուրսում աչքի ընկան: «Վանյուշինի զավակները» ուսումնական ներկայացումն այնքան նշանակալի եղավ (ռեժ. Սարգ. Քոչարյան), որ մեր ՈՒԳՀ-ը ճնարկման նյութ դարձրեց, ուր ճառախոսներս այն համեմատում էինք մայր թատրոնի «Եգոր Բուլըչով»-ի, իսկ Իշխանի Վանյուշինը՝ Վաղարշյանի Բուլըչովի հետ... Չուր չէր, որ առաջինը, ինստիտուտի պատմության մեջ, Ղարիբյանին ավարտելուց հետո անմիջապես թատրոն ընդունեցին: Բայց... անցավ մեկ-երեք-հինգ տարի, նա միայն մի-երկու անգամ դեր խաղաց: Միակ ուշագրավը ծեր Ֆիրսն էր («Բալենու այգին»), ուր արժանավորապես փոխարինում էր ժամանակի ամենակարկառուն արտիստին՝ Վաղարշ Վաղարշյանին: Հետո շատ անհասկանալի բաներ եղան. թատրոնի հանդերձարանում հրդեհ բռնկվեց, եւ Իշխանին տարան այնտեղ, ուրկից նույնպես ոչ ոք չի վերադառնում: Բայց Իշխանը վերադարձավ ու «հանձնվեց իր դիմումի» ազատվեց ու ընդունվեց պատանի հանդիսատեսի թատրոն: Այստեղ շատ էին ուշացել. անհիշարես գլխավոր դերերը լցրին վրան: Խաղում էր շատ եւ տարբեր, հանդիսատեսներին: Ժամանակի ազգային թատերագրությանը նշանակալի եղավ նրա ծառայությունը, հանի որ հնայրով ու հավատի էր անձնավորում հեղինակի եւ բեմադրիչի գաղափարա-գեղարվեստական բեռը կրող հերոսներին: Սուրեն (Արամանյան՝ «Այսպես անցնում էին տարիները»), Ազատ (Յաղջյան՝ «Գարնան ցունչ») ֆոն Շտերլինգ (Շաթիրյան՝ «Երազշախուռ») եւ այլն, դասականներից՝ Օսեի («Քանդած օջախ») Գիժ Դանել («Շար ոգի»), օտարներից՝ Դ՝ Արտանյան («Երեք հրացանակիրներ») Գալիլեյ (համանուն դրամայում), Միլոն՝ Գոցիի «Ագռավը» (առաջին անգամ հայ բեմում, բեժ. Զ. Տաթինցյան): Բնեռադատները նշում էին Իշխան Ղարիբյանի արտիստական անհատականության շահեկան կողմերը. ներքին ջերմությունը, կերպարի ներքին եւ արտաքին անմոռաց նկարագիրը, փոխակերպման այնքիսի ուժը, որ հնարավորություն է ընձեռում նվազագույնի հասցնել կեղծամի ու դիմաներկի օգտագործումը: Հատուկ ընդգծվում էր աչքի զարնող մի արժանիք եւս. անտաստելի ու նորովի է ներկայացնում հերոսների, որոնք մեր եւ ռուսական բեմերում բենական մեծ կենսագրություն ունեին: Օրինակ, հեղափոխության բնանի ամենախորհրդի ֆոն Շտուբեն («Բելում»), անատաստելի, հարգանքի արժանի գեներալի տիպ էր, ում չէիր կարող միտել միայն խաղախական նկատառումներով:

Շուտով Իշխանը դարձավ նաեւ նորաստեղծ հեռուստատեսային թատրոնի փնտրված դերասանը: Ռեժիսորները «հերթի» էին տալիս եւ հարմարվում Ղարիբյանի ազատ ժամերին, մի բան, որ անլուծելի խնդիր էր պատանիների թատրոնի՝ օրական 2-3 ներկայացումների հանգամանքով: Այնպես որ փրկության պես բան էր, երբ 1967-ին հիմնադրվեց երդրամատիկը, եւ Իշխանը փոխադրվեց այնտեղ: Հիմնադիր բեմադրության («Մեր եւ ծիծաղ») մեջ նրա սուր բնութագրական Արքին աղան վառ բանվածք եղավ Ղափլանյանի ծիծղուն կտավում: Ընդհանրապես այս թատրոնում ժանրային արտասովոր բազմազան, մի դեպքում՝ հոգեբանական նրբին զննումով, մեկ այլ դեպքում՝ գրոտեսկային, վառ դիմադասկերով դերակատարումները դարձան ոչ միայն Ղարիբյանի կենսագրության, այլեւ այս թատրոնի ու ժամանակակից դերասանական արվեստի նշանակալի երեւույթներ: Օրինակ, եթե էյնշտեյնը աչքի էր զարնում ինտելեկտուալ-հոգեբանական խորագույն զննումով («Մարդ, որ ուզում էր Աստված դառնալ»), ապա արտաքուստ անհաղորդ Քրմապետը («Աստվածների կանչը») մշտարբուն բնությամբ, որի աչքից չի վրիպում պալատական ոչ մի անցուդարձ... Հակոնցյա նկարագիր էր տարեց, զվարթ ու վառ կոլորիտով Ագարոն («Քանի դեռ սայլը շուռ չի եկել»), պայմանական-թատերային Գրեգիդենցը («Ամենատխուր մարդը»). կերպարներ, ուր արտիստը շատ ավելին էր ասում լռությամբ, հայացքով, քան տեքստով (սա նույնպես աննանձնահատուկ դերասանական շնորհ է): Ոչ մի կերպ ու ոչ ոքի հետ չեմ շփոթի տարեց կավալեր Վիկտոր Վարեսկոյին, որն ասես երգիծական ոչակատից է իջել. գունեղ փողկապ, «ճչան» ծաղկանկար վերնաշապիկ, մեծ բմբուլը կատարին բերեց եւ սիրամարգի պես բարեմասնությունները ցուցադրող ծեփծեփուն ձեւեր... Հապա չորուկ-մորուկ ծեր Գենեռա՞լը, ում կյանքի լավագույնը անցյալում է մնացել, սակայն ոչ մի կերպ չի համակերպվում ու չարչրկվում է, ծիծաղելի դառնում կորովի ու կենսահոգ երեւալու ծիգերից... Այս ամենը հետաքրքրական է ոչ միայն արտիստական վարպետության, այլեւ կյանքի դիտարկումների, բնութագրման նրբին կուտակումների առումով: Բայց ամենազարմանալին Ղարիբյանի Ամադեոն է («Դահիճը»). պրոֆեսիոնալ մարդասպանը: Ավելի մեղմ, սիրահաճ ու պատրաստակամ, ինչ որ տեղ՝ խե՛ղճ մարդ, դժվար է պատկերացնել, իսկ մարդ սպանելու մասին այնպես է խոսում, որ կարելի է կարծել, թե դա ամենամարդասիրական գործն է եւ այս դահճի ձեռքով այն աշխարհը գնացողներն էլ՝ ամենաբախտավորները: Սակայն մարդը համոզում է, եւ դու նրան հավատում ես. չէ՞ որ դերասանական արվեստի մեծագույն հատկանիշը համոզելն է: Ղարիբյանը համոզում է՝ ինչ ասի եւ անի. սա է կարեւորը: Դա անվերապահորեն վերաբերում է թե՛ հոգնած-սպառված դպրոցի մանկավարժ Սահակ Վանունուն («Վերջին ուսուցիչը»), եւ թե՛ արտագաղթելու ցավով տառապող Հարություն Հալաջյանին: Բոլոր դեպքերում էլ՝ արտաքին (դիմաներկ, կեղծամ) միջոցները նվազագույնի է հասցված: Այստեղից էլ փորձ էկրանի բարեհաջողությունը:

Այստեղ ունեցած դերակատարումները բավական կլինեին դերասանական լիահունչ կենսագրության համար: Ի դեպ, «անավարտ դեմքով», ինչպես Փափազյանը կասեր, ինքն է ու իր դեմքը, բայց ոչ մի կերպար չես շփոթի մյուսի հետ: Սա ընտանիքի ու անհանգիստ զավակների հոգսերից ծանրացած նրա Ավետիքը («Բարի ճանապարհ»), տարեց գնդապետ, օրինավոր մարդ Տիմոֆեեւը («Երբ սոխակներն են երգում»), ծարզիկ Կիմը այնքան ազնիվ էակ է, որ ճարպիկ ու գործարար միջավայրում կորցնում է ամեն ինչ եւ նույնիսկ սիրած կնոջը եւ անասելի տառապում («Իրիկնաքուշից մինչ կեսօր»), խեղճուկրակ Միկոլան, որ կնոջը կորցնելու վշտից գորանում ու ծեռ է բարձրացնում իրենից ուժեղ ու զարհուրելի հակառակորդի վրա, սպանում նրան («Գողացված երջանկություն»), Նիկոլայ Տարասովը («Տեսեք, ով է գալիս») կյանքը սովետական կարգերին նվիրաբերած, արդեն հանգստի անցած մարդ, բայց չի կարողանում անտարբեր մնալ սոսկ կյանքի բարիքները վայելելու համար բարոյական արժեքները ոտնակոխ անող եւ նույնիսկ ֆիզիկապես օրինավոր մարդկանց կյանքին սպառնացող բախտախնդիրների հանդեպ: Ռուսագգի նրա կերպավորումների մեջ թերեւս ամենաբարդը Ռոդիոն Նիկոլաեւիչն է («Հնաոճ կատակերգություն»). առողջարանի տարեց բժիշկը, որ ճանաչում է բուժման եկած միայնակ կնոջը՝ Լիդիա Անդրեեւնային, սկսում է կյանքն ընկալել նոր դիտանկյունից: Պատերազմում մեկը որդուն, մյուսն՝ ամուսնուն կորցնելով, նրանք իրենց կյանքն ավարտած էին համարում, սակայն երկու միայնակները գտնում են միմյանց, եւ կյանքը վերստին ժպտում է: Երկու գործող անձ ունեցող մոտ երեժամյա պատումի ընթացքում նրանք տեւականորեն գտնվում են հեռուստադիտողի աչքի առաջ եւ պետք է ջանան ոչ միայն չկրկնել իրենց, այլեւ ծանձրալի չլինել: Նրանք, ովքեր տեսել են այդ ներկայացումը, կհաստատեն, որ Իշխան Ղարիբյանն ու Սարգո Սուրադյանը այնքան հաճելի, հնարաքուշ, հումորով կերպարներ էին արարել, որ էկրանային «վտանգավոր» տեւողությամբ պատումը դիտվում էր մեծ հետաքրքրությամբ: Եվ սրա կողքին՝ անսպասելի գունեղ մի կտավ. Տուդիեկին՝ Վորֆոլոմեեւի «Սուրբ եւ սատանա» տրագիկոմեդիայից: Ռուս կորովի ու միայն աչխատավարձով ապրող կարգին մարդ, երբ շուրջ բոլորը մեքենայություններով հարստանում են, իսկ իր կինն ու աղջիկը ընթրստանում են... Խեղճ Ղարիբյան-Տուդիեկինի խոհերը մեզ անտարբեր չեն թողնում, եւ յուրաքանչյուրն իրեն է տեսնում նրա մեջ, յուրովի խորհում «աշխարհի բանը»: Տուդիեկինի հոգու կանչով հայտնվում են Աստված ե՞ Սատանան: Առաջինը հորդորում է այն, ինչ մարդը գիտե, բայց ոչ մի լավ բանի չի հասել, իսկ երկրորդը խոստանում է բարիք, հեղինակություն, բախտավորություն: Յուդիեկինը թողություն է խնդրում Աստծուց, դաշնակցում Սատանայի հետ եւ... ամեն ինչից բարիք է թափվում, նրան առաջ են քաշում, դեպուտատ դարձնում, իսկ «վերեւից նայող» կանայք, նեղվում են գիրկը... Ընտանիքում երջանկություն է, դստերը խնամախոսելու են գալիս... Բայց ամեն ինչի դիմաց պետք է հատուցե՞լ: Սատանան նրա տանը տիրոջ պես է պահում իրեն եւ նույնիսկ վիրավորական սիրախաղ անում կնոջ ու դստեր հետ... Տուդիեկինը զզվել է ամեն ինչից եւ ուզում է հեռանալ մարդկանցից, առանձնանալ ամայի տայգայում: Լավ կյանքի սովորած մարդուն շատ դժվար է ամեն ինչից հրաժարվել, սակայն Տուդիեկինը վերադառնում է Աստծո «թիմը»... Ցավի ու խնդության, վայելքի ու տառապանքի ի՞նչ կերպաններով է անցնում մարդը՝ արտիստի դժվարին անցումներ, հոգեդարձումներ ու փոխակերպումներ առաջադրելով:

Փոքր էկրանում շատ կերպարներ է արարել Ղարիբյանը, որոնք մշտապես փայլել են հոգեբանական հավաստիությամբ, ժանրային բեւեռային դրսեւորումով, սակայն նրա համար ամենից սրտագրավը հայրենակիցների կյանքն ու ճակատագիրն արտահայտող կերպարներն են: Նրանց մեջ են Պողոս էֆենդին («Թաղականին կնիկը»), Հայրապետ էֆենդին («Պարտք մեր հանապազօրյա») եւ համբարձումը՝ Արմեն Դարյանի «Լեռը» պատումից: Հատկապես վերջին երկուսը մեր ժողովրդի ճակատագրի տեսակետից խորհրդանշական կերպարներ են: Վերջին տարիներին հեռուստադիտողը հանիցս առիթ ունեցել է դիտելու այս էկրանի նվաճումներից մեկը՝ Դյուրենմաթի «Դատավորն ու դահիճը»՝ մի խումբ հոգեբանական խաղի վարպետների հետ, որոնցից այնուհանդերձ կառանձնացնենք Իշխան Ղարիբյանին (Բելախ) եւ Վլադիմիր Մարյանին (Գաստման). բարու եւ չարի հակամարտությունը կրողներին, որ ռեժիսորի մեկնությամբ (Արշակ Մարգարյան) խոսում, լռում են խոշոր պլանում ... լարում մեզ հայացքով, քան խոսքով...

ՎԱՐՍԵՍ ԳԲԻԳՈՐՅԱՆ

ԱՐՎԵՍՏԱԳԵՏԻ ԽՈՍՔ

Մենք, մեր հոգեւորը, մեր հավատքը, մեր հովվապետերը...

Այսպես, լավ թե վատ հասել ենք ով գիտե որերորդ հազարամյակին եւ թե անցյալում պատմությունից գիտենք, եւ թե այսօր մեր կաշվի վրա ենք զգացել բազում քաղաքական, տնտեսական վարիչներ տեսած ու դեռ չվայելածներս, այսօր մեր սերնդով երեւի թե առաջին անգամ կանգնած ենք ազգովին հոգեւոր առաջնորդ ընտրելու բարդ ու ճնճղանոթ իրավիճակի շեմին... Մենք՝ ափսրհին հայտնի քրիստոնեությունն առաջինը պետական կրոն ընդունած հայերս, բայց պետությունն ու եկեղեցին ոչ միշտ միացյալ, միաբան տեսած հավատացյալ անհավատներս...

Մեր քրիստոնեական մտածողությունը մեզնից միշտ առաջ է ընկել խոովք պատճառելով մեր հոգուն եւ մեր այրերի արտահայտությանը, հայի աչքեր, խեղճ, խոնավ, որ գալիս է մեր խոովված, արհամարհված հոգուց... հոգին, որին եւ ողորմի ենք տալիս, եւ հայհոյում ենք...

Մեր խարխլված հավատքը... մեզ ծանուկներիս, դպրոցականներիս ագիտատոր բոլշեւիկները համոզում էին, որ տերտեր տեսնելիս ճանապարհը պիտի փոխենք, վատ նշան է...

Իմ երկու նորընծա կուսակցական դեկավար ընկերներն իրենց՝ հարազատի մատաղի օրը չմտան մոմ վառելու... իրենց համար միակ աստվածը Լենին պապին էր... «Ախ, մեր խոցված, արյունոտ, այրվող, աղտակված, ճչացող մանուկ հնավատը»...

Բազմակշռվածության բախտավոր թե դժբախտ դպրերից մեզ չեն հասել մեր հոգեւոր հայրերի պատմությունները... թե իրենց անձի եւ թե վարած գործունեությունների մասին... ազգօգո՞ւտ, ազգադա՞վ, թե՞ ազգանվեր... չենք կարդացել, չենք լսել... անգետ ենք...

Քրիստոնեությունը հնարավորություն տվեց իմանալու մեր 131 հոգեւոր հայրերի, անձի գործին չվերաբերող պատմությունները... Խնկարկելի երջանկահիշատակ արքազնագործ... փառք իրենց-հիշատակին... Ինձ համար Աստծո սպասավորները եղել են արքեր... ինչպես իմ ուսուցիչները... ես երբեք չեմ կարծել, որ նրանք մեզ պես սովորական մահկանացուներ են, որ ուտում են, խմում, վայելում... Աստծո տաճարն ինձ համար եղել եւ մնում է արքայար... Եւ այսօր պիտի ընտրենք ողջ հավատացյալ ժողովրդի համար Ամենայն հայոց հայրապետ... Ինձ համար եւ երեւի թե ինձ նման մտածողի համար ցավալի է, որ ասում ենք ազգովին, որովհետեւ անտարբերություն կոչված հիվանդությունից ընդարմացածները բացառիկ դեպքերում չեն մասնակցում այս բացառիկ երեւույթին...

Եվ ցավալի է, որ հոգեւոր հայրերը սկսել են (կամ միշտ այսպես են եղել, մենք չենք իմացել) քաղաքական գործիչների նման մտածել, ափսրհիկ ծեւերով գահին տիրանալու համար... Բայց, դե, մարդ ենք, չէ՞... այո, մարդս Աստված չէ...

Բայց Աստծո դեմ մեղանչած չենք լինի, եթե հիշենք Շեքսպիրին «Նա մարդ էր, Հորացիո, իր ամեն բանով»: Այո... ամեն բանից առաջ մարդ պիտի լինել նաեւ բնամանյանական բնորոշմամբ մեր սրբազան հայրերը, փառք Աստծո, փայլում են իրենց մարդկային վեհ հատկանիշներով եւ հոգեւորականին վայել գիտությամբ եւ կրթությամբ... եւ մարդ են, եւ մասնագետ, եւ... Այ, այստեղ ես պիտի առանձնացնեմ մեկին, որ երորդ կարեւոր գործոնը կրողն է, գուցեեւ այսօր ամենակարեւոր: Մեր Առաքյալ թեմի առաջնորդ Գարեգին արք. Ներսիսյանը, որին ճանաչում եմ, գիտեմ մարդ, մասնագետ, քաղաքացի... Գաղտնի չէ, որ մեր հոգեւոր դասը մեզնից միշտ հեռու է եղել, մի տեսակ սահման կա մեր միջեւ... Այստեղ ես հատակ կարող եմ ասել, որ Գարեգին արքազանն իր քաղաքացիական պարտքի զգացողությամբ, եկեղեցու կարծրացած օրենքների մասին իր նոր դատողությամբ, Հայաստանում մոլեգնող ոգու սովի եւ աղանդների դեմ պայքարելու իր համոզիչ, գիտական, մշակութային պայքարի ծեւերն օգտագործելու հմտությամբ, մարդու եւ եկեղեցու այդ անջրպետը վերացնելու մտահոգությամբ այսօր պետք է եւ անհրաժեշտ մեզ, մեր եկեղեցուն, Պարույր Սեւակի ահազանգին «Ես վախենում եմ բյուրավոր ու բութ հավատացյալից, բյուրաստեղ ու սուտ հավատացյալից», ունկ դարձնող է, տեսնող է, գործող է... Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանը...

Մեր զույգերը թատրոնի եւ եկեղեցու փոխհարաբերությունների մասին ինձ հնարավորություն են ընձեռել ճանաչելու կարելիությունները: Վերջապես միակն է, որ Հայաստան աշխարհի, մայր հայրենիքի ցավը ոչ թե հեռվից, այլ շատ մոտիկից գիտե, իր հոգու մեջ է, սրտի մեջ է այդ ցավը, եւ բուժողներից մեկն ինքը պիտի լինի... եւ երանի կարողանա իրագործել՝ բոլորիս երազանքը մեր երկիրեկված եկեղեցին միավորելու...

Միածնին պաշտելու մի ուղի կա, մենք ինչո՞ւ ենք քառուղիներում խարխափում...

Նախապատվությունը տալով Գարեգին արք. Ներսիսյանին, դեռ 50-ը չբոլորած, առողջ եւ ազնվաբարո այրին, իր գիտելիքներն ամբողջովին նվիրաբերելու տենչով տոգորված կրոնավորին... Հայաստանը, համայն հայությունն աստվածայալ լույսի մեջ տեսնելու փափագով ապրողին ցանկանում եմ ամենայն անկեղծությամբ ասել... կարեւորը, ամենակարեւորն ազգային ծրագիրն ու գաղափարախոսությունն է... եւ միաբանությունը... Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանն այս առաքելությունն իրագործողներից է:

ԱՇՈՏ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Ասոմ Էգոյանին շնորհվեց Կանադայի բարձրագույն պարգեւը

Կանադայի պատվո շքանշանի հանձնման արարողության ժամանակ Ասոմ Էգոյանը բարձր գնահատեց հնարավորությունները, որը ոչ տեղացին ունի Կանադայում:

Շքանշանով պարգեւատրվեցին այգեգործության մասին գրքերի հեղինակ Էդմոնտոնյան Լուիս Հոուլը, որը վերջերս նշանակվել է Ալբերտայի համալսարանի ռեկտոր, Սան Մեդիա կորպորացիայի նախագահ Փոլ Գոդֆրին, Վիլիի Լիթլյալոը Ալբերտա համալսարանից եւ Էդմոնտոնյան Արլիս Միլլերը:

«Ես երեւակայում էի, թե ինչպես կարդեի այլ պայմաններում... ինչը հազվադեպ եմ անում», ասում է Էգոյանը, որի «Պանծալի աղագա» ֆիլմը ներկայացվել էր ամերիկյան կինոակադեմիայի մրցանակի երկու նոմինացիաներում: «Հանկարծ մտածեցի, որ ես ուրիշ մի տեղ եմ ծնվել եւ այստեղ եկած առաջին սերունդն եմ: Այս պայմաններում իմ հնարավորությունները բավական լավն են»: Էգոյանը Կահիրէից Կանադա է տեղափոխվել 2,5 տարեկանում: Ընտանիքը հաստատվել էր Վիկտորիայում, որտեղ նրանք միակ հայ ընտանիքն էին: Որդի Հոլում Էգոյանը, կինոարտադրող Էլվի Յոսքը, Սի-Բի-Սի-ի լրագրող Դոն Նյուման եւ եւս 51 կանադացիներ ստացան Կանադայի շքանշանի պարգեւները, որը վերջին անգամ նրանց հանձնեց Ռոմեո Լեբլանկը: Շուտով նրան իր պատասխանում կփոխարինի Ադրիեն Քլարկսոնը:

Արարողության ժամանակ Լեբլանկը յուրաքանչյուր պարգեւատրվողին մի քանի բառ էր ասում. «Ուրախալի է, որ դուք հարավ չեք փնկնել», ասաց նա Էգոյանին: «Եվ երբեք չեմ մեկնի», պատասխանեց Էգոյանը:

Իսկ արարողությունից հետո Էգոյանը տեղեկացրեց, որ մեկնում է ԱՄՆ բացառապես աշխատելու նպատակով: Կատակելով տեղեկացրեց, որ չի ուզում իր հետ էլ նույնը կատարվի, ինչ մարդկանց հետ է պատահում, երբ նրանք «Լոս Անջելեսում չափազանց երկար են ապրում»:

THE ARMENIAN MIRROR SPECTATOR

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մարզական

ՖՈՒՏԲՈԼ

«Արարատը» կրկին միավորներ է կորցնում

Հայաստանի առաջնության 27-րդ տուրի երեք հանդիպումներից առավել մեծ հետաքրքրություն էր ներկայացնում «Արարատ»-«Կիլիկիա» խաղը: Նախորդ տուրում «Շիրակից» կրած 0-4 հաշվով պարտությունից հետո արարատցիներն առաջատարի իրենց դիրքը զիջել էին գյումրեցիներին: Անշուշտ, «Արարատը» ձգտելու էր վերականգնել իր սասանված դիրքը, մանավանդ որ «Շիրակն» այս տուրում ազատ էր: Սակայն «Կիլիկիային» հաղթելն այնքան էլ դյուրին գործ չէր, ինչը զգացին արարատցիները: Հանդիպումն անցավ բավական լարված ու անզիջում պայքարում: Երկու թիմերն էլ ունեցան դարպասները գրավելու հարմար առիթներ, սակայն ֆուտբոլիստների կասարողական ցածր պատրաստությունը թույլ չտվեց արդյունքի հասնել: Առաջին խաղակեսում ավելի ակտիվ էին հյուրերը, որոնք էլ մի քանի անգամ լրջորեն սպառնացին «Արարատի» դարպասին: Առաջին վտանգավոր պահը ստեղծվեց 17-րդ րոպեին, երբ տուգանային հրապարակ ներխուժած Արման Քարամյանին վայր գցեցին: Մրցավար Արարատ Ճաղարյանը համարեց, որ խախտումը տեղի է ունեցել տուգանային հրապարակից դուրս եւ բավարարվեց տուգանային հարված նշանակելով: Լեւոն Սարգսյանի հարվածից հետո գնդակը դիպավ դարպասի ծողին: Հարմար դիրքերից վրիպեցին Արտավազդ Քարամյանն ու Նշան Երզրումյանը: 10 րոպե անց արդեն Արսեն Ավետիսյանն էր մոտ հաջողությանը: Աջից սանձալով Հովակիմ Հովակիմյանի փոխանցումը Արսենը մոտ տարածությունից փորձեց գրավել դարպասը, սակայն Կարեն Բաբայանը որսաց գնդակը: 3 րոպե անց իրավիճակը գրեթե նույնությամբ կրկնվեց «Արարատի» տուգանային հրապարակում, սակայն Արման Քարամյանը «չնկատեց» դարպասը:

Հանգստից հետո «Արարատը» տիրեց նախաձեռնությանը եւ բավական ուժեղ ճնշում գործադրեց «Կիլիկիայի» դարպասին: Հյուրերը հաջողությամբ պաշտպանվում էին եւ բավական սուր ու վտանգավոր հակագրոհներ ձեռնարկում: Եվ եթե «Կիլիկիայի» ֆուտբոլիստներն աչքի ընկնեին դիպուկությամբ, արդա հյուրերը կարող էին եւ հաղթանակ տանել: Շափազանց նոպաստավոր դիրքերից վրիպեցին Երզրումյան եղբայրները, Արման Քարամյանը: «Արարատն» էլ մի քանի անգամ սպառնաց դարպասին, բայց հաջող խաղաց Կարեն Բաբայանը: Որքան հանդիպումը մոտենում էր ավարտին, այնքան խաղադաշտում պայքարի լարվածությունն աճում էր: Եղավ մի պահ, երբ Արսեն Ավետիսյանը վայր ընկավ տուգանային հրապարակում: Արարատցիները 11 մ էին ակնկալում, իսկ մրցավարը ֆուտբոլիստի գործողություններում միտում տեսնելով զգուշացրեց նրան, ինչը առաջացրեց արարատցիների դժգոհությունը: Ինչեւէ, դարպասներն այդպես էլ մնացին անառիկ:

«Ցեմենտը» սեփական հարկի տակ 8-0 հաշվով հաղթեց «Գյումրիին», իսկ «Ձվարթնոց»-«Երեբունի» խաղում հաշիվը չբացվեց: Հիշեցնենք, որ «Դվինի» հետ հանդիպումը «Երեբունին» բողոքարկել էր, եւ թիմին հաղթանակ է գրանցվել 3-0 հաշվով:

ԱՐՍՈՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Մրցաշարային աղյուսակ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Ս
1. Շիրակ	24	18	2	4	64-26	56
2. Արարատ	25	17	5	3	51-17	56
3. Ցեմենտ	24	17	2	5	59-15	53
4. Երեւան	24	12	5	7	47-26	41
5. Ձվարթնոց	24	10	5	9	35-30	35
6. Երեբունի	24	9	5	10	32-28	32
7. Կիլիկիա	24	8	3	13	47-39	27
8. Դվին	25	2	2	21	19-87	8
9. Գյումրի	24	1	1	22	17-103	4

Անկացվեցին 4-րդ տուրի հանդիպումները

Եվրոպական երկրների չեմպիոնների լիգայի 5-8-րդ խմբերի թիմերը անցկացրեցին 4-րդ տուրի խաղերը:

Հինգերորդ խմբում առաջատար դարձավ «Պորտոն», որը պարտության մատնեց «Ռեալին»: Դաշտի տերերի կազմում այդի ընկավ Մարիո Ժարդելը, որը 2 անգամ գրավեց իսպանացիների դարպասը: Առաջին հաղթանակը տոնեց «Մոլդեն»: Ընդ որում, նորվեգացիներն առաջին խաղակեսից հետո պարտվում էին 0-2 հաշվով, բայց երկրորդում 3 անգամ կարողացան գրավել «Օլիմպիակոսի» դարպասը:

Առաջատարի փոփոխություն կատարվեց նաեւ վեցերորդ խմբում: Այն բանից հետո, երբ «Վալենսիան» ու «Բավարիան» ոչ-ոքի խաղացին, «Գլազգոն» բաց չթողեց ընձեռված հնարավորությունը եւ խոշոր հաշվով հաղթեց «էյնդհովենին»:

Հաջորդ փուլին մասնակցելու իրավունքն իր համար ապահովեց «Բորդոն» (յոթերորդ խումբ): Ֆրանսիացիները Մոսկվայում հաղթեցին տեղի «Սպարտակին»: «Բորդոյի» գոլերը խփեցին Յոհան Միկուն եւ Լիլիան Վիլսորը, դաշտի տերերից պատասխան գնդակը խփեց Անդրեյ Տիխոնովը (11 մ-ով): Շաս տուր ընթացավ «Վիլլեմ-II»-«Սպարտա» հանդիպումը: Հոլանդացիները շաս մոտ էին հաջողությանը. նրանք առջեւում էին 2-0, 3-1 հաշվով, բայց ի վերջո պարտվեցին: Ընդ որում, 2 գոլ ընդունեցին 11 մ տուգանայիններից հետո:

Պայքարը սրվեց ութերորդ խմբում: Բելգիայի օլիմպիական մարզադաշտում հավաքված ֆուտբոլասերներն ականատես եղան իրենց «Հերտայի» հաղթանակին փառաբանված «Միլանի» նկատմամբ: Միակ գոլը խփեց Դարիուշ Վոսը: Իսկ Ստամբուլում «Շելսին» 5-0 հաշվով ջախջախեց տեղի «Գալաթասարային»:

Հինգերորդ խումբ

«Պորտո» (Պորտուգալիա)-«Ռեալ» (Իսպանիա) 2-1
«Մոլդե» (Նորվեգիա)-«Օլիմպիակոս» (Հունաստան) 3-2

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Պորտո	4	3	0	1	6-4	9
2. Ռեալ	4	2	1	1	11-7	7
3. Օլիմպ.	4	1	1	2	8-9	4
4. Մոլդե	4	1	0	3	5-10	3

Յոթերորդ խումբ

«Սպարտակ» (Ռուսաստան)-«Բորդո» (Ֆրանսիա) 1-2
«Վիլլեմ-II» (Հոլանդիա)-«Սպարտա» (Չեխիա) 3-4

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Բորդո	4	3	1	0	7-4	10
2. Սպարտա	4	2	2	0	9-4	8
3. Սպարտակ	4	1	1	2	6-6	4
4. Վիլլեմ-II	4	0	0	4	6-14	0

Վեցերորդ խումբ

«Վալենսիա» (Իսպանիա)-«Բավարիա» (Գերմանիա) 1-1
«Գլազգո Ռեյնջերս» (Շոտլանդիա)-«էյնդհովեն» (Հոլանդիա) 4-1

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Գլազգո	4	2	1	1	6-4	7
2. Վալենսիա	4	1	3	0	5-3	6
3. Բավարիա	4	1	3	0	5-4	6
4. էյնդհովեն	4	0	1	3	3-8	1

Ութերորդ խումբ

«Հերտա» (Գերմանիա)-«Միլան» (Իտալիա) 1-0
«Գալաթասարայ» (Թուրքիա)-«Շելսի» (Անգլիա) 0-5

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Հերտա	4	2	2	0	6-4	8
2. Շելսի	4	2	1	1	7-2	7
3. Միլան	4	1	2	1	3-3	5
4. Գալաթ.	4	0	1	3	3-10	1

ՈՒԵՖԱ-ի գավաթի խաղարկությունում

Անցկացվեցին նաեւ ՈՒԵՖԱ-ի գավաթի խաղարկության հիմնական փուլի երկրորդ շրջանի առաջին հանդիպումները: Մարզասերների ուշադրությանն ենք ներկայացնում դրանց արդյունքները:

«Տոտենհեմ» (Անգլիա)-«Կայզերսլաուտերն» (Գերմանիա) եւ «Լանս» (Ֆրանսիա)-«Վիտես» (Հոլանդիա) հանդիպումները կանցկացվեն հոկտեմբերի 28-ին:

Երկրորդ փուլի պատասխան հանդիպումները կանցկացվեն նոյեմբերի 3-4-ին:

«Լիդս» (Անգլիա)-«Լոկոմոտիվ» (Ռուսաստան) 4-1
«Սյյաուա» (Ռումինիա)-«Վեստ Հեմ» (Անգլիա) 2-0
ՍՏԿ (Հունգարիա)-ԱԵԿ (Հունաստան) 2-1
«Լեւսկի» (Բուլղարիա)-«Յուվենտուս» (Իտալիա) 1-3
«Դեպորտիվո» (Իսպանիա)-«Սոնոթելե» (Ֆրանսիա) 3-1
«Արիս» (Հունաստան)-«Սելտա» (Իսպանիա) 2-2
«Հաղոյել» (Հ. Իսրայել)-«Այաքս» (Հոլանդիա) 0-3
«Ուդինեզե» (Իտալիա)-«Լեգիա» (Լեհաստան) 1-0
«Պարմա» (Իտալիա)-«Հելսինգբորգ» (Շվեդիա) 1-0
«Ինտեր» (Սլովակիա)-«Նանտ» (Ֆրանսիա) 0-3
«Ռոդա» (Հոլանդիա)-«Վոլֆսբուրգ» (Գերմանիա) 0-0
«Ցյուրիխ» (Շվեյցարիա)-«Նյուքասլ» (Անգլիա) 1-2
ԳԱԿ (Ավստրիա)-«Պանաթինաիկոս» (Հունաստան) 2-1
«Ասլեթիկո» (Իսպանիա)-«Ամիկա» (Լեհաստան) 1-0
«Անդերլեխտ» (Բելգիա)-«Բոլոնյա» (Իտալիա) 2-1
«Վերդեր» (Գերմանիա)-«Վիկինգ» (Նորվեգիա) 0-0
«Սլավիա» (Չեխիա)-«Գրասհոպերս» (Շվեյցարիա) 3-1
ՊԱՕԿ (Հունաստան)-«Բենֆիկա» (Պորտուգալիա) 1-2
«Վիծեզ» (Լեհաստան)-«Մոնակո» (Ֆրանսիա) 1-1

«Գյոթեբորգ» (Շվեդիա)-«Ռոմա» (Իտալիա) 0-2
«Տեպլիցե» (Չեխիա)-«Մայորկա» (Իսպանիա) 1-2
«Լիոն» (Ֆրանսիա)-«Սելթիկ» (Շոտլանդիա) 1-0

ՇԱԽՄԱՏ

Ասակնկալներով լի է մրցաշարի միջնամասը

Հայաստանի տղամարդկանց 59-րդ առաջնության բարձրագույն խմբի մրցաշարի միջնամասն անսպասելի ընթացք ստացավ: Մի հետաքրքիր օրինաչափություն է նկատվում. առաջատարների խմբում հայտնվելուն պես ցանկացած մասնակից գրեթե անմիջապես պարտություն է կրում: Այդպես, օրինակ, եղավ Լեւոն Արոնյանի հետ, որը նույնիսկ երկու անընդմեջ պարտություն կրեց: Նույն ճակատագիրն ունեցավ Արտաշես Մինասյանը, որը պարտվեց վերջին 9-րդ տուրում: Մրցաշարի միակ անպարտելի մասնակիցը գյումրեցի Արա Մինասյանը, որը 9-րդ տուրից առաջ զբաղեցնում էր 2-րդ տեղը, նույնպես ճաշակեց պարտության դառնությունը: Վերջին տուրերի ընթացքում իրենց մրցաշարային վիճակը կտրուկ բարելավեցին Կարեն Ասրյանն ու Գաբրիել Սարգսյանը: Այժմ, առաջնության ավարտից երկու տուր առաջ, առաջատարների խմբում դրությունը սրվել է: 6-ական միավորով առաջին տեղերում են ընթանում գրոսմայստերներ Արտաշես Մինասյանը, Կարեն Ասրյանը եւ միջազգային վարպետ Լեւոն Արոնյանը: 5,5 միավոր է վաստակել միջազգային վարպետ Արա Մինասյանը, 5-ական միջազգային վարպետներ Ալեքս Նաղաշյանն ու Գաբրիել Սարգսյանը: Հինգ գլխավոր մրցանակներից մեկին կարող է հավակնել նաեւ միջազգային վարպետ Արսեն Եղիազարյանը, որը 4,5 միավոր ունի:

ԱՐՄԵՆ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ
Միջազգային կարգի մրցավար

Նախորդ համարում տպագրված մրցանակային խաչբառի պատասխանները

Ուղղահայաց

1. Նվարսակ: 2. Մեյե: 4. «Մն»: 5. Սարգար: 6. Քե: 7. Արվանձյանց: 9. Կորգանյան: 10. Բագրատունի: 12. Սուսերա: Ծարս: 17. Արբիա: 18. Սիկոյան: 19. «Սոնա»: 20. Արգոնավորդ: 24. Նոյ: 25. Յա: 26. Ա: Ոչխար: 28. Արշակ: 30. Ես: 32. «Արակս»: 35. Դեղնախտ: 37. Գոշ: 39. Ուռկան: 42. Ուլ:

Հորիզոնական

3. «Հայտավուրք»: 8. Յաղդ: 11. Ոստ: 13. Գորգիսյան: 14. Անցագիր: 15. Կարաղեն: 16. Ապանա: 18. Սատվակ: 21. Բաժրակենի: 22. Սոնք: 23. Արեգունի: 27. Գաման: Քաթիրա: 28. Արա: 29. «Նե»: 31. «Ամոր»: 33. Սու: 34. Բագրեւանդ: 36. Եգոր: 38. Անհուշ: 40. Խնկենի: 41. Խնուս:



ԽԱՉԲԱՌ

Հորիզոնական

1. Ֆրանսիացի կոմպոզիտոր, դաշնակահար, դիրիժոր, ճնարդաս: 4. Արեւմտյան հասարակական հաղարակի գործիչ, գրող, հրապարակախոս, երգիծաբան (1831-1874): 10. Ա. Պուշկինի յատիածո վեպի հերոսը: 11. Պարբերական հանդեսարգի V գլխավոր ենթախմբի հիմնական տարր: 13. Երկրաչափական մարմին: 14. Գեղաբեսիլ լիճ Աբխազիայում: 15. Ֆրանսիացի գրող, գրել է «Կոմս Մոնտե Քրիստո» վեպի շարունակությունը: 16. Կարակալպակիայի մայրաքաղաքը: 18. Կտրող գործիք: 19. Եվրոպական պետության մայրաքաղաք: 21. Լեհական մանր ազնվականությունը: 22. Աֆրիկյան պետության մայրաքաղաք: 23. Նեղոսի ծանծաղուտներում աճող հինգ մետր բարձրությամբ եղեգ: 26. Քաղաք Իտալիայում: 29. Թռչուն: 31. Թմրանյութ: 32. Ավստրիացի գրող: 33. Անապատ Չիլիում: 35. Գյուղ Լոռու մարզում: 37. Պինդ վառելիք: 38. Քաղաք Ճապոնիայում, որտեղ անցկացվել է ձմեռային օլիմպիադա: 39. Հայ ծովակալ: 40. Խորհրդային կոսմոնավիգացիոն եւ պետական գործիչ: Համառուսաստանյան կենտրոնական գործադիր կոմիտեի (ՀԿԳԿ) նախագահ (1919 թ.): 41. Հելլադացի պոետ:

Ուղղահայաց

1. Ամրոց պատմական Աղվանքի հյուսիսային ծայրամասում. ներկայումս քաղաք Դաղստանում: 2. Անգլիացի ակադեմիկոս, լույսի ինտերֆերենցի հայտնագործողը: 3. Հոլիվուդյան կինոդերասան. մարտաֆիլմերի հերոս: 5. Դիցաբանության մեջ հավատացվել է որպես ընտանեկան օջախի եւ կրակի աստվածուհի: 6. Աշխարհում ամենաշատակեր էակը: միջատ: 7. Սատանգիտություն: 8. Սառնի հատկությունը, երբ այն շարժվում է առանց առագացման, այսինքն անփոփոխ արագությամբ: 9. Քաղաք ՌԴ Կալուգայի մարզում: 10. Դիցաբանության մեջ առվում է, որ նա կարող էր պահպանում աստվածների եւ մարդկանց միջեւ: Պատգամախոս: 12. Գետ, որը սկիզբ է առնում Հայկական լեռնաշխարհից: 17. Տղամարդու անուն: 18. Քաղաք Հունգարիայում: 19. Չիու ծագը: 20. Խորհրդային կոսմոնավիգացիոն եւ պետական խոշոր գործիչ (1886-1934): 24. Հովանոցավորների ընտանիքի հոտավետ միամյա խոտաբույս: 25. Խորհրդային ականավոր ֆիզիկոս, հասարակական գործիչ, հայ ժողովրդի բարեկամ: 26. Գյուղ Տավուշի մարզում: 27. Խորհրդային ֆուտբոլիստ, եվրոպայի 1960 թ. գավաթակիր: 28. Փշոտ խոտաբույս բարդածաղկավորների ընտանիքից: 30. Հռոմեական կայսր: 33. Հայ գրող. «Խոսքել օրի» պատմավեպի հեղինակը: 34. Հայ ետերդային երգիչ: 36. Միացյալ ազգերի կազմակերպության նախկին քարտուղար: 37. Քաղաք Ճապոնիայում:

Կազմեց Տ. ՇԱՀՎԵՐԴՅԱՆԸ

Շաբաթօրյա «Ազգի» Մրցանակային խաչբառը ձիշտ լուծել եւ արժեքավոր մրցանակին է արժանացել Երեւանցի մաթեմատիկոս, «Նորամ» ՍՊԸ-ի ատենադպիր **Սամվել Իվանյանը**:

Մրցանակային հաջորդ խաչբառը կտպագրվի «Ազգի» հոկտեմբերի 30-ի համարում:

Փորձե՛ք լուծել, եւ արժեքավոր մրցանակը Ձե՛զ է:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՈՒՇԱԳԻՐ

WORLD BANK ԵՎ USAID

Կոռուպցիայի դեմ պայքարում մեզ աջակից է միջազգային հանրությունը

IFC-ի ներկայացուցիչ Մերի-Ելեն Իսկանդարյանը շուտով կժամանի Երևան

Համաշխարհային բանկի նախագահ Ջեյմս Վուլֆենսոնի նախաձեռնությամբ 2000 թ. մայիսին Լոնդոնում կայանալիք հայկական բիզնես-համաժողովին մեր կառավարությունը պարտավորվել է ներկայացնել 6–8 առաջարկների փաթեթ: Ամենաուշը նոյեմբերի վերջին հայաստանյան կառավարության կողմից մշակված այս ծրագիր-առաջարկները կուղարկվեն ՀԲ-ը՝ ուսումնասիրության համար: Հայաստանում ՀԲ գրասենյակի ղեկավար Օուեյս Սահաթը պարզաբանում է, որ ՀԲ-ն ձեռնարկում է բոլոր միջոցները, որպեսզի լոնդոնյան բիզնես-համաժողովը չվերածվի հերթական պարապ զրուցատեղի: ՀԲ-ն կառավարության առջև երեք պայման է դրել. ա) հայկական զարգացման գործակալության կառուցվածքային բարեփոխում, որպեսզի այն դառնա արտասահմանյան ներդնողներին հրապարակ աջակցություն ցույց տվող մասնագիտական հասուկ կենտրոն, բ) հանրապետությունում կոռուպցիայի դեմ պայքարի ծավալում եւ գ) միջնաժամկետ տնտեսական ծրագրերի մշակում, որոնք կներկայացվեն բոլոր հնարավոր ներդնողներին:

Օուեյս Սահաթը նշում է, որ Վազգեն Սարգսյանի նախաձեռնությամբ սկսվել է հակակոռուպցիոն համալիր ծրագրի մշակման աշխատանքը, որին ՀԲ-ի հետ մեկտեղ մասնակցում է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությունը (USAID). «Միայն նշված պայմաններին հետեւելու դեպքում է, որ հնարավոր կլինի համոզել ներդնողներին գումարներ ներդնել Հայաստանում»: ՀԲ գրասենյակից «Ազգը» նաեւ տեղեկացավ, որ լոնդոնյան բիզնես-համաժողովի կազմակերպմամբ ՀԲ-ի կողմից լիազորված է մասնակցել Միջազգային ֆինանսական կորպորացիան (IFC), որի ղեկավարներից հայազգի Ելեն Իսկանդարյանը շուտով կայցելի Հայաստան: Այսպիսով, հայկական կոռուպցիայի բազմագլուխ հրեշի դեմ վարչապետ Վազգեն Սարգսյանի պայքարին աջակից են միջազգային տարբեր կազմակերպություններ, եւ այդ պայքարի արդյունավետությունից է կախված Հայաստանի տնտեսական զարգացման առաջընթացը՝ վարկեր, ներդրումներ: Հայաստանյան ընդդիմության վաղեմի կարգախոսը, թե միջազգային ֆինանսական կազմակերպությունները երբեք փող չեն տա Հայաստանում դրական բարեփոխումներ կատարելու համար, դառնում է ժամանակավրեպ: Համենայն դեպս, այս պահին՝ կոռուպցիայի դեմ պայքարում միջազգային ուժերը մեզ հետ են:

Ն. Դ.

Բացվեց HSBC բանկի Կոմիտասի մասնաճյուղը

Շաբաթ օրը ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը պատշգամբից բացեց էյչ-էս-Բի-Սի բանկ Հայաստան ՓԲԸ-ի նոր մասնաճյուղը, որը գտնվում է Կոմիտասի պող. 3 հասցեում: Արարողությանը ներկա էին բանկի խորհրդի նախագահ Վալե Սանուկյանը եւ գլխավոր գործադիր տնօրեն Ջերեմի Հանքը:

Նոր մասնաճյուղի տարածքը ամբողջովին վերանորոգել է էյչ-էս-Բի-Սի բանկը: Այն ամբողջովին սարքավորված է նորագույն համակարգչային ցանցով: Մասնաճյուղը արբանյակային կապով կապված է HSBC խմբի միջազգային ցանցի հետ, որը բաղկացած է ավելի քան 5000 մասնաճյուղերից աշխարհի 79 երկրներում եւ տարածքներում:

Մասնաճյուղն առաջարկում է իր հաճախորդներին անհատական բանկային ծառայությունների լայն ընտրանի՝ ներառյալ արժեքների անհատական պահատեղում պահպանություն եւ ավտոմատ գանձապահական մեքենայի շուրջօրյա ծառայություն: Մասնաճյուղի տարածքում են գտնվում նաեւ էյչ-էս-Բի-Սի բանկ Հայաստան ՓԲԸ-ի առեւտրաբանկային վարչությունը, որը տրամադրում է կորպորատիվ եւ արտաքին առեւտրի հաշվարկային բազմաբնույթ ծառայություններ, ինչպես նաեւ էյչ-էս-Բի-Սի առպահովագրություն (Հայաստան) փակ բաժնետիրական ընկերության գլխամասային գրասենյակը, որը մատուցում է առպահովագրական համապարփակ ծառայություններ, ներառյալ բեռնափոխադրումների, փոխադրամիջոցների, գույքի, ընդհանուր պատասխանատվության, շինարարական աշխատանքների, ճամփորդական եւ անհատական (դժբախտ պատահարներից) առպահովագրության:

Բացման խոսքում պրն Հանքը նշեց, որ մասնաճյուղը կարեւոր ներդրում է Հայաստանում եւ վերահաստատում է HSBC-ի հավատն ու վստահությունը Հայաստանի տնտեսության շարունակական զարգացմանն ու աճին:

Բացման արարողությանը հաջորդեց ընդունելություն՝ «Արմենիա» հյուրանոցի դահլիճում 250 հրավիրված անձանց մասնակցությամբ:

Հիշեցնենք, որ HSBC Holdings-ը, որի գլխավոր գրասենյակը գտնվում է Լոնդոնում, ֆինանսական եւ բանկային ծառայություններ մատուցող աշխարհում խոշորագույն կազմակերպություններից մեկն է: 1999 թ. հուլիսի 31-ի դրությամբ HSBC խմբի ընդհանուր ակտիվները կազմել են ԱՄՆ 497 միլիարդ դոլար, բաժնետիրական կապիտալը՝ 31,6 միլիարդ ԱՄՆ դոլար, իսկ ընդհանուր կապիտալի հարաբերակցությունը 15.3 տոկոս է:

Ի լուր լրագրողների

Մամուլի ազգային ակումբը «Հրատապ թեմա» ծրագրի շրջանակներում լրագրողներին հրավիրում է հանդիպման ՀՀ արտգործնախարար Վարդան Օսկանյանի հետ:

Հանդիպումը տեղի կունենա այսօր՝ հոկտեմբերի 26-ին, ժամը 14:00-ին «Հոլսթեն» սրճարանում (Փ. Բուզանդի 1/3):

ՄԱՄ

Երեւան քաղաքի Շենգավիթ համայնքի առաջին ատյանի դատարանը որոշում է կայացրել մանուկում հաղորդագրություն հրապարակել 12.04.1968 թ. ծնված ՎԻՏԱԼԻ ՎԻԿՏՈՐԻ ԱՐԻՆԻՆԻ անհայտ բացակայող ճանաչելու վերաբերյալ գործ հարուցելու մասին:

Խնդրվում է բոլոր քաղաքացիներին եւ կազմակերպություններին, ովքեր տեղեկություն ունեն անհայտ բացակայողի մասին, հայտնեն Երեւանի Շենգավիթ համայնքի առաջին ատյանի դատարան:

ԿԱՆԱԴԱԿԱՆ "ARCO" ՖԻՐՄԱՆ

մատչելի գներով առաջարկում է արտասահմանյան, հիմնականում ամերիկյան եւ ճապոնական ավտոմեքենաների (Jeep Grand Cherokee, Toyota 4 Runner, Nissan Pathfinder, Toyota Landcruiser, Corolla, Camry, Lada եւ այլ մակնիշի) պահեստամասեր եւ զանազան արտասահմանյան ապրանքներ:

Օդի, յուղի եւ բենզինի ֆիլտրեր
Ամերիկյան «Champion» ֆիրմայի կայծամոմեր (սվեչա) (Jeep Grand Cherokee, Lada, ճապոնական եւ այլ մեքենաների համար)
Ball joint (շառավայա)
Ղեկային քարշիչ (տյագա)
Արգելակային դիսկեր ու ամորտիզատորներ
Աղակու մարիչներ եւ հակամառախուղային լուսարձակներ
Գործածված ամերիկյան սառնարաններ (լավ վիճակում) Գինը՝ 195-350 ԱՄՆ դոլար (ըստ մեծության)
Զուգարանի բարձրակ թուղթ, թղթե սրբիչ եւ անձեռոցիկ
Ամերիկյան բարձրակ պատի պաստառ եւ պաստառացու կտրեղեն

Հասցեն՝ Էջմիածնի խճուղի, Արեւմտյան թաղամաս եւ Արգավանդ տանող խաչմերուկից 250 մետր դեպի «Ձվարթնոց» օդանավակայան

Հեռ.՝ 744205 e-mail:root@arco.arminco.com

ԲԱՑ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՐԻՄՆԱԴՐԱՄ

Հայկական մասնաճյուղ (ԲՐԻՕՐՐՄ)

Հրատարակչական ծրագիրը

հայտարարում է մրցույթ հրատարակիչների միջեւ՝ Բուդապեշտի հրատարակչական զարգացման ծրագրի կողմից առաջարկվող հումանիտար գրականության հայերեն թարգմանության համար: Մասնակցել կարող են հումանիտար գրականություն տպագրելու նկատմամբ մշակական հետաքրքրություն ունեցող հրատարակիչները: Հանձնարարվող գրականության ցանկը, դիմումի ձեւերը եւ անհրաժեշտ տեղեկատվությունը կարելի է վերցնել ԲՐԻՕՐՐ գրասենյակում մինչեւ 1999 թ. նոյեմբերի 23-ը, ժամը 17:00-ը (հասցեն՝ Երեւան 19, Այգեձորի 53բ, հեռ. 272119, 271713, 273901, 271719, հեռ/ֆաքս 151 088, http/www;osi.am; email:bartsvi@osi.am)

FULBRIGHT SCHOLAR PROGRAM

Applications are now being accepted for the 2000/2001 Fulbright Scholar Program. Candidates must possess a Doctoral Degree (or equivalent professional training and experience) and English proficiency sufficient to conduct research in the United States.

Candidates will be considered in the following fields;

- Political Science, Economics, Social Science, International Relations, Journalism and Law.
- American Studies (History, Literature, Society and Culture of the United States).
- Chemistry, Public Health and Medicine

Application forms may be obtained from the Public Affairs Section at the U. S. Embassy, Bagramian str. 18, or at the IREX office at the Union of Architects, Baghramian str. 17, 3 rd floor.

For further information or to submit applications, please contact the Public Affairs office at 52 98 25 or IREX at 56 37 81

Application deadline is December 3, 1999.

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱԿԱՐԳ

26 հոկտեմբեր

17.00 Հայլուր
17.20 Արեւիկ
18.00 Հեռուստաթատրոն «Սուրճ կնոջ բուր մունիով»
18.55 Պատնաս
19.10 Հեռուստալոտո
20.00 Այսօր
20.25 Արտակարգ ալիք
20.35 Տունտունիկ
21.00 Հայլուր
21.40 Փորձությունների նորագույն պատմություն
22.10 Գ/Ֆ «Խոսիր համարձակ»
23.40 Հենց այնպես
00.00 Հայլուր
00.20 Կեսգիշերային ճեպընթաց
01.20 Ռուբիկոն+
Արբանյակային հեռարձակմամբ
02.00 Հեռուստաթատրոն «Իմ երկրորդ մայրը»

ՄՇԱԿՈՒՅԹ

19.00 Գ/Ֆ «Գվինեաներ»
20.30, 1.15 Լուրեր
20.50 Գ/Ֆ «Նատալոնն» (1-ին մաս)
23.30 Գ/Ֆ «Սարմնի մասեր»

9.00 Տոմար
19.00 Հրաղարակ
19.10 «Շղջիկը» ներկայացնում է. բնաշխարհ
19.30, 21.30, 23.30, 2.30 Սուրհանդակ
19.50 Սամուլի խոսնակ
20.05 Հմայիլ
20.30 Սարաթեզ
21.10 Շղջիկ
21.50 Գ/Ֆ «Խաղի կանոններ»
24.00 Անդորր
0.05 Ավետա
0.30 Խուժան ալիք
0.50 Գ/Ֆ «2 or տանը»

7.00 Բարի առավոտ
10.00 Նորություններ
10.15 Սերիալ «Քնքուշ թույն»
16.00 Նորություններ
16.20 Սերիալ «80 or աշխարհի տուրը»
16.45 Ամեն ինչ հնարավոր է
17.00 Լեռան արքան
17.30 ...Մինչեւ 16 եւ բարձր
18.00 Սերիալ «Քնքուշ թույն»
19.00 Նորություններ
19.25 Այստեղ եւ հիմա
20.00 Փնտրում եմ քեզ
20.50 Գ/Ֆ «Նատալոնը եւ ժոզեֆինան» (4-րդ սերիա)
21.45 Բարի գիշեր, երեխաներ
22.00 Ժամանակ
23.00 Գ/Ֆ «Երկուսով եւ մենակ» (դերերում Գ. Բուրկով, Ե. Մայորով, 1988 թ.)
00.35 Ա. Գորդոն «Սոլորությունների ժողովածու». Լավրենտի Բերիա
01.10 Նորություններ
01.25 Հոկեյ. Ռուսաստանի առաջնություն ԲԿՄՍ-«Մեսալուրգ» (Մագնիտոգորսկ)
02.20 Գ/Ֆ «Քաղաք կղզին»

7.30-10.20 Բարի լույս. Ռուսաստան
8.00, 9.00, 10.00 Լուրեր
9.15 Հերթապահ՝ բաժանմունք
10.20 Հոմեոպատիա եւ առողջություն
10.30 Հեռուստահանդես «Արենա-սպորտ»
11.00 Հոմեոպատիա եւ առողջություն
11.10 Սերիալ «Գնչուհին»
12.00 Սերիալ «Մեր գաղտնիքի ամառը»
13.00 Երդվյալ ատենակալների հեռուստատեսային դատարանի նիստը
13.50 Հոմեոպատիա եւ առողջություն
14.00, 18.00, 20.00, 22.00, 02.00 Լուրեր
14.20 Երկու դաշնամուր
15.10 Սերիալ «Անտոնելա»
16.10 Սերիալ «Վարքի հրեշակը»
17.00 Խանութ բազմոցի վրա
17.30 Սուլտծրագիր
18.20 Ուշադրակ
18.55 Սերիալ «Կոմիսար Ռեքսը»
20.30 Ռուսական սերիա. սերիալ «Սահիվան դիրեկտորիա»
21.25 Երգիծական ծրագիր «Շատրվանա կումբ»
22.45 Կինոյի ժամ. Աթինգը «Խաղաթղթեր, փողեր, երկու հրանոթ» ֆիլմում (Անգլիա)
00.45 Հրադարակախոսական բոլ.-շոու «Ժողովուրդն ուզում է իմանալ»
01.00 Հերթապահ՝ բաժանմունք
01.15 «Ա» ծրագիր
02.20 Խանութ բազմոցի վրա

Կորել է

Մարտունու Կարապետյանների «Ռուբեն» ԱՁ կլոր կնիքը եւ դրոշմիչը: Համարել անվավեր:

ՍՓՅՈՒՌ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
հեռախոսով (590000), տեղեկագրով (1800 դրամ), սկավառակով (3600 դրամ), INTERNET ցանցով (www.arminco.com/spyur; spyur.acc.am; armscape.com/spyur)

«Տիգրան Մեծ» հրատարակչության տպարան, Երեւան-23, Արշակունյաց 2. Գրանցման թիվ 65. Դասիչ 69149. Պատվեր 1139. Տպաքանակը՝ 4000. Ստորագրված է տպագրության՝ 25.10.1999. Գինը՝ 100 դրամ

digitised by A.R.A.R.@